

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ (8 մարտի, 2013 թ.)



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում մեծազնիվ տիկնանց եւ օրհորդներին՝ Մարտի 8-ի տոնական առիթով։

Ուրախություն է ամենքիս համար այսօր մեծարել մեր սիրելի մայրերին, ջուլներին ու դուստրերին եւ գնահատել մեր հայրենական, ազգային ու հոգեւոր կյանքում նրանց նվիրյալ ջանքերը, որոնք արդյունավորված են բազում ձեռքբերումներով։

Տևտեսության, գիտության, կրթության, մշակույթի եւ բոլոր ասպարեզներում իրենց ավանդով, նախանձախնդրությամբ, խնամքով ու հոգածությամբ կանայք շարունակ հաստատում են սուրբգրային խոսքը, թե բարի եւ իմաստուն կնոջ շնորհն առավել է, քան ոսկին։

Աղոթում ենք առ Բարձրյալն Աստված, որ Իր հանապազ օրհնության ներքո պահի ու պահպանի բոլոր կանանց եւ օրհորդաց՝ զորացնելով հավատքով, շնորհագարդելով հոգեւոր առաքինություններով եւ պարգեւելով ընտանեկան խաղաղ ու ապահով կյանք, անկված երջանկություն ու նորանոր հաջողություններ։

Մեր Տեր Դիսուս Զրիստոսի շնորհը, Աստծու սերը եւ Սուրբ Դոգու հաղորդությունը ձեզ հետ լինեն այժմ եւ հավիտյան։

## Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է Բուլղար Ուղղափառ Եկեղեցու նորընտիր գահակալին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Բուլղար Ուղղափառ Եկեղեցու նորընտիր Պատրիարք Նորին Սրբություն Նեոֆիտին։

«Տիրոջ օգնականությունն ու զորկացությունն ենք հայցում Ձերոյ Սրբությանը՝ մաղթանքով, որ Բարձրյալն Աստված Ձեր հովվապետական ծառայությունն արդյունավորի նոր ձեռքբերումներով՝ հանուն Բուլղար Եկեղեցու պայծառության եւ Ձեր հավատավոր ու բարեպաշտ հոտի հոգեւոր մխիթարության։ Մեր աղոթքն է նաեւ, որ Տերն արգասավորի Ձեր եւ Ձեր Եկեղեցու ջանքերը՝ ի խնդիր խաղաղության եւ համերաշխության ամրապնդման, Եկեղեցիների ու տարբեր կրոնների միջեւ երկխոսության եւ բարեկամության զորացման», - ասված է հայրապետական շնորհավորագրում։

Վեհափառ Հայրապետը նաեւ գոհունակությամբ անդրադարձել է Բուլղարիայի ծաղկուն հայ համայնքին՝ իբրեւ վկայություն երկու Եկեղեցիների պատմական կապերի ու համագործակցության։ Շնորհավորական ուղերձում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն է հայտնել, որ Նեոֆիտ Պատրիարքի գահակալության շրջանում երկու Եկեղեցիների միջեւ առկա եղբայրական եւ բարեկամական հարաբերությունները եւս կշարունակեն ծաղկել եւ արդյունավորվել՝ ի փառս Աստծու եւ ի բարօրություն հավատավոր երկու ժողովուրդների։

## Վարդապետական թեզերի պաշտպանություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Մարտի 11-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում տեղի ունեցավ վարդապետական թեզերի պաշտպանություն։

Մասնավոր վարդապետության աստիճանի համար թեզ էին ներկայացրել Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբաններ Գաբրիել արեղա Սարգսյանը («Տերունական աղոթքի հայ միջնադարյան մեկնությունները»), Տարոն արեղա Ղուլիկյանը («Ախթալայի եւ Զոբայրի վանքերը. պատմակեղեցական եւ դավանական պատկանելության քննություն»), Շահե արեղա Անանյանը («Իմաստություն եւ Աստվածաշունչ. իմաստության կերպարը՝ ըստ Առակաց Ա-Թ-ի»), Վարդան արեղա Նավասարդյանը («Քրիստոնեական կրթության եւ արժեքների դերը երրորդ Հանրապետության տարիներին») եւ Չաքարիա արեղա Բաղումյանը («Անապակ բաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում»)։



Հանձնաժողովը, որի կազմում էին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի վանական խորհրդի նախագահ եւ հրատարակչական բաժնի տնօրեն Նաթան արք. Դովհաննիսյանը՝ իբրեւ նախագահ, Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Անուշավան եպս Ժամկոչյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպս Պռոշյանը եւ Մայր Աթոռի կրթական հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյանը, քննելով ներկայացված թեզերը, արտոնել էր բանավոր պաշտպանություն։

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ առաջիկայում հայր Գաբրիելը, հայր Տարոնը, հայր Շահեն, հայր Վարդանն ու հայր Չաքարիան Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տվչության հատուկ արարողությամբ կստանան մասնավոր վարդապետության աստիճան։

## Հայրապետական այց Մեծ Բրիտանիայի հայոց թեմ


Մարտի 8-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց Մեծ Բրիտանիայի հայոց թեմ՝ թեմական-եկեղեցական հարցերով։

Այցի ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ ունեցավ նաեւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի բարերարների հետ։

## ԼՈՒՅՍԸ ԵԿԱՎ ԱՇԽԱՐՀ, ՍԱԿԱՅՆ ՄԱՐԴԻԿ ԽԱՎԱՐՆ ԱՎԵԼԻ ՍԻՐԵՅԻՆ, ՔԱՆ ԼՈՒՅՍԸ...

«*Ես եմ աշխարհի լույսը. ով Իմ ետեւից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը*»  
(*Յովհ. Ը 12*)

Այս խոսքերը մարդեղացյալ Աստվածորդին ուղղեց անհավատ հրեաներին, ովքեր իրենց հոգու կուրության հետեւանքով չէին կարողանում ճանաչել Քրիստոս Մեսիայի հայտնությունն իրենց մեջ։ Կատարվել էր այն, ինչ դարեր ի վեր կանխագուշակել էին մարգարեները. Օրենքի եւ մարգարեների կանխաճառությունը, թե՛ Աստված պիտի երեւա մարմնով եւ շրջի մարդկանց մեջ, այլեւս իրողություն էր։ Աստծու Միածին Որդին՝ աշխարհի Փրկիչը մարդացել եւ մարմնացել էր մեղավոր աղամորդու, համայն աշխարհի փրկության համար։ Նա էր արդարության Արեգակը եւ իմանալի Լույսը, որ Իր անճառելի մարդեղացմամբ եւ փրկագործության վեհ խորհրդով լուսավորեց մարդկանց խավար մտքերն ու խորհուրդները, եւ ինչպես մար-



գարեն է ասում, «խավարի մեջ նստած ժողովուրդը տեսավ Մեծ Լույսը» (տե՛ս Եսայի Թ 2)։ Նա իր լուսավոր եւ փրկաբեր ուսուցումներով, հրաշագործ բժշկումներով դեպի երկինք ուղղեց մոլորյալ մարդկության ընթացքը, բժշկեց ցավերից ոչ միայն նրանց անցավոր մարմինները, այլեւ մեղքերով հիվանդ նրանց անմահ ու աստվածակերպ հոգիները, քանզի անհավատությունից բերեց հավատի լույսի, անգիտությունից՝ ճշմարիտ գիտության, մեղքերից՝ արդարության՝ մեզ պարգեւելով արեւի պես պայծառ Նոր Օրենքի Լույսը։

Շարունակությունը՝ էջ 2



Սկիզբը՝ էջ 1

Արդեն իսկ Իր երկրավոր առաքելության ընթացքում, տեսնելով մարդկանց խստասրտությունն ու անհավատությունը, ասաց. «Եթե չհավատաք, որ Ես եմ, կմեռնեք ձեր մեղքերի մեջ» (Հովհ. Ը 24): Նաեւ՝ «Նա, ով մեղք է գործում, մեղքին ծառա է» (Հովհ. Ը 34), ուստի չի կարող նշմարել փրկաբեր լույսը եւ գնալ դեպի այն, քանզի այդպիսի մեկի միտքը մթազնված է մեղքերով, որովհետեւ երբ մարդու հոգեւոր աչքը կուրանում է, երբ հոգու լույսը հանգչում է, խավարի իշխանն է դառնում տիրակալը մարդու ներաշխարհի:

Հովհաննու Ավետարանում աշխարհի Լույսն այս մասին հստակ ասում է. «Լույսը եկավ աշխարհ, սակայն մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան լույսը, որովհետեւ իրենց գործերը չար էին. որովհետեւ ով չարիք է գործում, ատում է լույսը եւ չի գալիս դեպի լույսը, որպեսզի նրա գործերը իր երեստվը չտան» (Հովհ. Գ 19, 20): Ուրեմն մեղքն է հեռացնում մարդուն աստվածային կենարար Լույսից, քանի որ լույսը բացահայտում է կեղծիքն ու անօրենությունը: «Իսկ նա, ով կատարում է այն, ինչ ճշմարիտ է, գալիս է դեպի լույսը, որպեսզի նրա գործերը հայտնի լինեն, թե Աստծով կատարվեցին» (Հովհ. Գ 21):

Աստծո պատկերով եւ նմանությամբ ստեղծված մարդու հոգին բնականորեն ձգտում է դեպի բարին, աստվածայինը,

## ԼՈՒՅՈՐ ԵԿԱՎ ԱՇԽԱՐՀ, ՍԱԿԱՅՆ ՄԱՐԴԻԿ ԽԱՎԱՐՆ ԱՎԵԼԻ ՍԻՐԵՅԻՆ, ՔԱՆ ԼՈՒՅՈՐ...

լույսը... Սակայն այս մեղավոր աշխարհում խիստ դժվար է Տիրոջ ուղենշած փրկաբեր ճանապարհից չեղվել ու չընկնել մեղքերի հորձանուտը, խավարի ու չարիքի աշխարհը: Ծառերը, հաճույք գտնելով անիրավության ու մեղքի մեջ, կամովին անձնատուր են լինում անառակության եւ ամեն տեսակ պիղծ գործերի՝ մերժելով Տիրոջ փրկության հրավերը, նախընտրելով լույսը խավարից, մեղքը՝ արդարությանը (տե՛ս Եփես. Դ 22-25, Կողոս. Գ 9-10): Քրիստոսով ամեն բան նոր եղավ, անհնարինը՝ հնարավոր: Մեղքի եւ անօրենության ճանապարհից ետ դառնալու, փրկության լուսավոր ուղին ընտրելու համար Տիրոջ օգնականության կարիքն ունենք: Պետք է ամուր կամք դրսեւորենք եւ մարդասեր Աստծու օգնությամբ փորձենք ոտքի կանգնել, քայլել դեպի ճշմարիտ Լույս, դեպի Քրիստոս, Ով մշտապես ուղղում է յուրաքանչյուրիս Իր մարդասիրական հորդորը. «Ով իմ ետեւից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը»: Քրիստոսը մարդացավ եւ աշխարհ եկավ մեզ ազատագրելու մեղքի եւ խավարի, սատանայի իշխանությունից, եւ ոչ միայն ազատագրելու. Նա մեզ արժանացրեց որդիության բարձրագույն պատվին, եթե հավատանք Իր անվանը, ինչպես Ինքն իսկ ասաց. «Ովքեր նրանց ընդունեցին, նրանց իշխանություն տվեց լինելու Աստծո որդիներ, նրանց, որոնք Իր անվանը կհավատան» (Հովհ. Կ 12): Ո՛վ հրաշք. հավիտենական Աստվածը, համայնի Արարիչը որդեգրություն շնորհեց միայն Իր պատկերակցին՝ մարդուն: Միայն մարդն է, որ իշխանություն ունի Աստծուն Հայր անվանելու: Եվ ինչպես սուրբ Եղիշեն է ասում իր «Հայր մեր» ա-

ղոթքի մեկնության մեջ. «Այս ասելու իշխանություն չունեն հրեշտակները, թեպետեւ հզոր են եւ հոգեւոր, սակայն սպասավորներ են եւ ոչ՝ որդիներ»: Եվ զգուշացնում է մարդուն. «Ո՛վ մարդ, զգուշացիր քո անձի համար, տես, թե ինչպիսի պատվով մեծարվեցիր՝ մինչեւ իսկ Աստծուն քեզ Հայր անվանելու իշխանությունն ստացար...»: Հետեւաբար պարտավոր ենք Հոր կամքի համաձայն ընթանալ այս կյանքում՝ որպես Աստծո որդիներ, իսկ եթե որդի ենք, ապա եւ ժառանգ ենք Աստծո արքայության՝ ըստ սուրբ Պողոս առաքյալի (տե՛ս Հռոմ. Ը 16-17): Բայց արքայությանն արժանի լինելու համար պարտ է այս կյանքում ապրել ինչպես Աստծո սիրելի զավակներ, ինչպես «լուստ որդիներ», իսկ «լույսի որդի» լինելու համար պետք է հավատալ Լույսին, ինչպես մեր Լույս Աստված է ասում. «Հավատացեք լույսին, որպեսզի լույսի որդիներ լինեք» (Հովհ. ԺԲ 36): Սուրբ առաքյալը հորդորում է. «Թեպետ մի ժամանակ խավար էիք, հիմա լույս եք ի Տեր. ընթացեք ինչպես լուստ որդիներ, ...եւ խավարի անպտուղ գործերին մասնակից մի եղեք» (Եփես. Ե 8-11): Ինչո՞ւ ընտրենք խավարը, չարիքն ու անօրենությունը, ինչո՞ւ մեր անօրեն ու չար ընթացքով վանենք մեզնից աստվածային գութն ու ողորմությունը: Տեսնում ենք, որ նույնիսկ Աստծո ստեղծած զարմանահրաշ աշխարհում, բնության մեջ իսկ ամեն բան ձգտում է դեպի լույսը. փոքրիկ բույսերն ու հաստաբուն ծառերը, թռչուններն ու թեւավոր միջատները ձգտում են դեպի լույսը, դեպի կենսատու արեւը՝ այդ կերպ իսկ անբարբառ խոստովանելով Լույսի Աղբյուրի գոյության անժխտելի փաստը: ...Բնության մեջ օրինակները բազում են, ոչ բանական աշխարհը սովորեցնում է մեզ՝ բանականներին, ձգտել աստվածային կենարար Լույսին, փարվել կյանքի Աղբյուրին, առանց Որի ունայն ու խավար կլինի մեր երկրային գոյությունը, եւ տառապալից՝ հավիտենական գոյությունը:

«Աստված լույս է, եւ Նրա մեջ խավար չկա, բոլորովին չկա: Եթե ասենք, թե հաղորդության մեջ ենք Նրա հետ, բայց քայլենք խավարի մեջ, ստում ենք եւ ճշմարտությունը չենք կատարում», - զգուշացնում է սիրո Ավետարանիչ սուրբ Հովհաննես առաքյալը: «Իսկ եթե լույսի մեջ ենք քայլում, ինչպես որ Ինքն է լույսի մեջ, հաղորդության մեջ ենք լինում միմյանց հետ, եւ Նրա Որդու՝ Հիսուսի արյունը մաքրում է մեզ ամեն մեղքից» (Ա Հովհ. Ա 5-8):

Քայլենք Լույսի մեջ, ճշմարիտ Լույսի եւ աշխարհի Փրկչի ոտնահետքերով, Նրա ուղենշած փրկաբեր ճանապարհով, որի վախճանը հավիտենական կյանք եւ անմահություն է՝ լուսավոր ու բերկրությամբ լի երկնային արքայության մեջ, ուր կա կյանք՝ առանց մահի, անմահություն՝ առանց ծերության, լույս՝ առանց խավարի, ուրախություն՝ առանց տրտմության, ուր չկա գիշեր, քանզի Աստծո փառքն է լուսավորում այն ամեն ժամ (տե՛ս Հայտն. ԻԱ 23-27):

Խնդրենք գթած եւ բազումողորմ Աստծուն, որ Իր ողորմության եւ լույսի շողը կաթեցնի մեր խավար ու մեղքերով սեւացած հոգիներում ու մտքերում, լուսավորի մեր սրտերն աստվածգիտության լույսով, մարդասիրաբար առաջնորդի մեզ փրկության փշոտ, բայց եւ լուսավոր ճանապարհով, տա մեզ գորեղ հավատ եւ ամուր կամք՝ դիմակայելու փրկության ճանապարհին խոչընդոտ հանդիսացող տարաբնույթ փորձություններին ու դժվարություններին: Սաղմոսերգուի հետ քաջաբար կրկնենք. «Տերն իմ Լույսն է ու Կյանքը, ումի՞ց վախենամ. Տերն իմ կյանքի ապավենն է, ես ումի՞ց դողամ» (Սաղմ. ԻԶ 1): Միշտ բաց պահենք մեր հոգիների աչքերը՝ դրանք հառելով մեր ճշմարիտ Լույս Քրիստոսին, Ում վայել է փառք, իշխանություն եւ պատիվ այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից, ամեն:

Ամենա ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին աստուածաշնչեան ժողովրդավարութեան եւ Քրիստոսի Եկեղեցւոյ առաքելական շրջանի ուղղափառ դաւանութեան 1700-ամեայ պատուար

Սկիզբը՝ 2013 թ. թիվ 2-4

Մեր ազգային դաւանութիւնը՝ ներառելով թե՛ երկաթնակների եւ թե՛ միաբնակների դաւանութեան տարրերը, իր դաւանաբանութեան համալիրով գրեթէ հաւասարապէս առանձնացաւ թե՛ մեկից եւ թե՛ միւսից: **Չեղութեան այս հանգամանքով Հայոց եկեղեցին ինքնաբերաբար դարձաւ երրորդ խոշոր ճիւղը քրիստոնեական հին եկեղեցիների մէջ:** Ըստ Մաղաքիա արք. Օրմանեանի՝ Հայոց Եկեղեցին միջնադարում 30 միլիոնի չափ հետեւորդ է ունեցել (*Մաղաքիա Օրմանեան, Հայոց Եկեղեցին, Եր., 1993 թ., էջ 333*), որոնց մէջ՝ Վրաց (մինչեւ Է դարը), Աղուանից, Ղաթի, Եթովպական Եկեղեցիները: Այս պատճառով է, որ եթե յոյներին, բուլղարներին, վրացիներին, ռուսներին եւ այլոց ասում են «յունադաւան», եւրոպական ազգերի մեծամասնութեանը՝ «լատինադաւան» կամ «կաթոլիկ», ապա հայերին օտարներն անուանել եւ անուանում են «հայգրիգորեան»: Խայերս մեր դաւանութիւնը անուանում ենք **հայադաւան:** Եզրակացութիւնը հետեւեալ իրողութիւնն է. քանի որ Բիւզանդիան եւ Հռոմը քրիստոնեութիւնը փորձում էին դարձնել ապագայի զարգացարախօսութիւն՝ ուրիշ ազգերին իրենց տիրապետութեան տակ գցելու համար, հայերն էլ,

ինքնաբերաբար պահպանելով ճշմարիտ քրիստոնեութիւնը, այն դարձրինք մեր ինքնութիւնը, կրթամշակութային ու քաղաքական անկախութիւնը պահպանող ազգային զարգացարախօսութիւն: Այսպէս, հայոց քրիստոնեականը՝ հայադաւանութիւնը, դարձաւ արեւմտեան եւ արեւելեան քաղաքակրթութիւնների խաչմերուկներում հազարամեակներ շարունակ մարտնչող **հայկական ինքնուրոյն ու անշփոթելի քաղաքակրթութեան խտարանը, համայն հայութեան հոգեւոր անկախութեան եւ միասնութեան վեճը, հայ ազգի հոգեւոր հայրենիքը:**

Քանի որ Հայաստանեայց Եկեղեցին պահպանել է քրիստոնեական նախնական շրջանի անաղարտ դաւանութիւնը եւ **յետագայ դարերում երկու ճակատով մարտնչել է քրիստոնեութիւնը երկու ծայրայեղութիւններից հեռու պահելու համար**, ուստի, անկասկած, իր դաւանութիւնը քրիստոնեական Եկեղեցին վերամիաւորելու շաղախն է: Օրինակ բերենք թեկուզեւ Յիսուս Քրիստոսի բնութեան շուրջ քրիստոնեայ աշխարհը դարեր շարունակ փոթորկող վեճը: Այս վեճի մէջ մեր Եկեղեցին միջին դիրք է որդեգրել. Յիսուսի մէջ Աստուածը եւ մարդը անզատելի, բայց միաժամանակ անխառնելի-անշփոթելի եւ «անճառելի» կերպով միացած են գիրար,

ինչպէս հոգին ու մարմինը մարդու մէջ: Կամ՝ ոչ դաւանաբանական, բայց նոյն կարեւորութիւնն ունեցած մէկ այլ կնճիռ. յայտնի է, որ յոյները տիեզերական են համարում Եօթ ժողով՝ Նիկիայի Ա (325 թ.) տիեզերաժողովից մինչեւ Նիկիոյ երկրորդ ժողովը ( 787 թ.), իսկ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին, բացի այս Եօթից, շարունակում է տիեզերական կոչել եւս 13-ը՝ մինչեւ 1870 թ. Վատիկանում գումարուածը, որոնք Յոյն Ուղղափառ Եկեղեցին ու նրան հետեւող ազգերը տիեզերական չեն ճանաչում: **Հայերս տիեզերական ենք ընդունում միայն առաջին երեքը, որոնք ընդունելի են թե՛ Յոյն Ուղղափառ եւ թե՛ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների համար:** Այս, նաեւ մի քանի այլ հանգամանքներով Հայաստանեայց Եկեղեցու դաւանութիւնը քրիստոնեական Եկեղեցու միաբանութեան խարիսխը, հիմքն ու ենթահողն է: Մտայնութիւն, որը, ի դէպ, առկայ էր նաեւ վաղ միջնադարեան Եկեղեցու ոչ թե՛ հայ, այլ օտարազգի՝ մեծ հայրերի շրջանակներում: Նրանցից մէկը՝ Միքայել Մեծը, պատմում է, որ Պետրոս եպիսկոպոս Գագացին (Գագայեցի) հայերին ուղղած իր նամակում գրում է. «Ի Զաղկեդոն ուրացան զՔրիստոս. դուք պիտի կացեք ի հայրենի հաւատոյ՝ որ շնորհեցաւ ձեզ ի Տեառնէ եւ աշխարհեղ ձեր. զի որպէս երբեմն



սերմն մարդկութեան այդուստ (Հայաստանից - Ռ. Հ.) սփռեցաւ ընդ աշխարհ (նկատի ունի Նոյի Էջըը Արարատեան դաշտ - Ռ. Հ.), նոյնպէս առ ձեզ պահեցաւ սերմն ուղղափառ հաւատոյ. եւ ի ձե՛նջ տարածելոց է ընդ բազումս» (*Արշակ Տէր-Միքէլեան, Նոյն աշխատութիւնը, էջ 89-ի ծանօթագրութիւնը*):

Կամ՝ 616 թ. Տիգրանում կայացած՝ Պարսկական կայսրութեան բոլոր քրիստոնեայ Եկեղեցիների աստուածաբանների ժողովը, որին մասնակցում էին նաեւ Ալեքսանդրեայից գերուած իմաստասերներ եւ Երուսաղեմի Չաքարիա պատրիարքը, քննելով բոլոր քրիստոնեայ ժողովուրդների դաւանութիւնը, ճշմարիտ է ճանաչում միայն հայոց դաւանանքը: Այդ ժողովի որոշման հիման վրայ Պարսից թագաւոր Խոսրով Փարւեզը հրաման է արձակում. «Ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ գՀա-

յոց կացցին» (իմ իշխանութեան տակ գտնող բոլոր քրիստոնեաները հայոց հաւատն ընդունեն (*Սեբէոս եպիսկոպոսի Պատմութիւն, Երեւան, 1939, էջ 125*):

Այս հաստատումների պերճախօս վկայութիւններն են 1971 թ. Վիեննայում կայացած՝ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների, 1990 թ. Յունադաւան Օրթոդոքս Եկեղեցիների եւ Արեւելեան ոչ Օրթոդոքս Եկեղեցիների խորհրդածողովներում ընդունուած հաշտարար փաստաթղթերը (*Կոմիւնիկէ, տե՛ս «Գանձասար» աստուածաբանական հանդէս, Եր., հատոր Ե, էջ 48-53*), որոնց ձեւակերպուած դաւանական սկզբունքները շատ մօտ են Հայաստանեայց Եկեղեցու դարբերով քարոզած վարդապետութեանը, մասնաւորապէս՝ լատիններին եւ յոյներին յղած ս. Ներսէս Շնորհաւու բանաձեւերին:

Շարունակությունը՝ էջ 7

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՐԻԿՈՍՆԵՐ

# ՋԱԿՈՐ Ե ԸՎԱԿԽԵՉԻ (1759-1763)

Սահակ Ահագինի տարօրինակ եւ անհասկանալի ընթացքի պատճառով կաթողիկոսական աթոռը երկար ժամանակ թափուր մնաց։ Այդ կացությունը հատկապես ծանր էր Մայր Աթոռի միաբանների համար։ Միաբանության մեջ կային երկուսը, որոնք հենց սկզբից էլ դեմ էին եղել Սահակի ընտրությանը, ինչը կատարվել էր Կ. Պոլսի հայ մեծամեծների եւ, անշուշտ, Նալբանի կամքով։ Այդ միաբաններն էին Սիմեոն Երեւանցին եւ Աբրահամ Աստապատցին։ Նրանք հենց սկզբից կոչ էին անում ձեռք բաշել Սահակ Ահագինի թեկնածությունից եւ պնդում, որ անհրաժեշտ է նոր կաթողիկոս ընտրել։ Սկզբում նրանց ասածը մեծ ազդեցություն չթողեց, բայց ժամանակի ընթացքում նրանց ձայնը լսելի դարձավ։ Նրանց հետ միակամ էր տեղակալ Ջակոբ Շամախեցին, սակայն նա խոհեմություն ունեցավ մեջտեղ չգալու։ Նալբանը, որ Սահակի պաշտպաններից մեկն էր, նույնպես սկսեց իր կարծիքը փոխել։ Ջավանաբար նրանք նամակներ էլ փոխանակեցին, չնայած այդպիսիք չեն պահպանվել։ Երբ Նալբանի հորդորները Սահակը չկարեւորեց, որոշվեց կաթողիկոսի ընտրության համար մեծամեծների ժողով հրավիրել։ Նրանց մեծ մասը հանդես եկավ նոր կաթողիկոս ընտրելու օգտին։ Նալբանն արդեն երկիցս հրաժարվել էր կաթողիկոսությունից եւ միտքը չէր փոխել նաեւ երրորդ անգամ։ Թուրքիայում նշանավոր դեմքեր էլ չկային, իսկ Սիմեոն Երեւանցին ու Աբրահամ Աստապատցին այնքան էին պայքարել Սահակ Ահագինի դեմ, որ թեկնածու չէին կարող լինել՝ առանց մեղադրանքի տակ ընկնելու։ Մնում էր տեղակալ Ջակոբ Շամախեցին, որը, փաստացի, չորս տարի վարում էր աթոռը՝ չլինելով կաթողիկոս։

Ընտրությունը տեղի ունեցավ 1759 թվի օգոստոսին՝ թերեւս Աստվածածնի տոնին, որն այդ տարի օգոստոսի 15-ին էր կամ դրան մոտ մի օր։

Սահակ Ահագինի ընտրությունը չեղյալ հայտարարվեց, եւ Ջակոբ Շամախեցին հռչակվեց կաթողիկոս։ Ժողովին ներկա էին Սիմեոն Երեւանցին ու Աբրահամ Աստապատցին, որոնք մեկնեցին, համապատասխանաբար, Էջմիածին եւ Կարին՝ այդ որոշումը գործադրելու։ Ստացվեց Սահակի նամակը, թե՛ «Ձեր կամքով գնացի Էջմիածին, Ձեր կամքով էլ հեռանում եմ այնտեղից»։ Հրավիրվելիք ժողովի մասին Սահակին տեղյակ էր պահել Գասպար Մուրադյան ամիրան, եւ Սահակը որոշել էր իր նամակով խաբել ժողովրդին։ Իրականում Սահակը Կարնից այն կողմ չէր էլ անցել։ Նալբանը նամակի մասին հայտնեց մեծամեծներին, որոնք հայտարարեցին, որ ընտրությունն արդեն կատարված է, ուստի նոր ժողով գումարելու կարիք չկար։ Այսպես անփառունակ եղավ Սահակ Ահագինի ընթացքը չորս տարի շարունակ։

Երբ Աստապատցին եկավ Կարին, այնտեղ նա հանդիպեց Սահակին այցելության եկած Ջակոբ Շամախեցուն։ Շամախեցին կամենում էր հորդորել Սահակին, որ գա Էջմիածին։ Աստապատցին Կարնո եկեղեցում հանդիսավոր հայտարարեց, որ նոր կաթողիկոս է ընտրվել Կ. Պոլսում, եւ նա Ջակոբ Շամախեցին է։ Նա Սահակից հաշիվ պահանջեց, քանի որ վերջինս շատ բան էր գանձել Էջմիածնի հասույթներից։ Հաշիվն ստացվեց տեղի փաշայի կողմից, ինչը ցույց է տալիս, որ նոր ընտրության համար սուլթանի հրովարտակը կար։ Գործը փաշային էր հասել, քանի որ Սահակը, ըստ երեւոյթին, դժկամություն էր հայտնել հավաքածը ետ տալու խնդրում։ Ստանալով հաշիվը փակելու Սահակի խոստումը՝ Աստապատցին Շամախեցուն առաջնորդեց Էջմիածին, եւ 1759 թվի նոյեմբերի 24-ին տեղի ունեցավ օծումը։ Սակայն, ըստ Մ. Օրմանյա-



նի, այն այդ օրը չէր կարող կատարվել, իսկ հարմար օրը նոյեմբերի 28-ն է։ Շամախեցին կաթողիկոսությանը նվիրված անձ էր եւ առանձնապես չէր շրջագայել։ Նա էլ էր տուժել Ղազար Ջահկեցու հալածանքներից։ Շամախեցին կաթողիկոս դարձավ արդեն առաջացած տարիքում, որը խանգարեց նրան նույնքան արդյունավետ գործելու ընտրվելուց հետո։

Հայտնի է, որ նրա օրոք ստացվեցին մի շարք կալվածների պաշտոնագրերը, եւ Երեւանում նորոգվեց Ձորագյուղի անապատը, որը վերածվեց հայրապետանիստ տան։

Ինչ վերաբերում է Կ. Պոլսի պատրիարքարանին, ապա այստեղ դրությունը խաղաղ էր Նալբանի օրոք։ Նա՝ հավատարիմ Կոլոտի բռնած գծին, ամեն ինչ անում էր համերաշխությունը պահ-



պանելու հայադավան եւ մեղմ հռոմեադավան հայերի միջեւ։ Կոլոտը կարողացել էր ծայրահեղներին զսպել, սակայն Նալբանը, որ իր հմտություններով եւ կարողություններով չէր զիջում Կոլոտին, Պրոխորոնի դեպքից, Պրուսա քաշվելուց եւ Երուսաղեմ գնալուց հետո զգալիորեն խախտել էր իր դիրքերը։ Նա կարողացել էր ետ վերադառնալ Յաղուբ ամիրայի շնորհիվ, բայց իր պաշտպանի եղբրական վախճանից հետո առիթ էր տվել, որ իրեն մեղադրեն

կաթոլիկության նկատմամբ թույլ եւ գիշողական վարքագիծ ունենալու մեջ։ Այստեղանդեմ՝ նրա ներքին համոզմունքները չէին փոխվել, եւ նրա շրջապատի մարդիկ ու առաջին հերթին Սարգիս Սարաֆյանը, թեկուզ եւ կաթոլիկության միտումներ էին ցույց տալիս, չէին համարձակվել իրենց հայադավան դիրքը փոխել, քանի որ Նալբանի գործակիցն էին։ Հակառակ Նալբանի զգուշավորությանը՝ մի խլրտում եղավ 1761 թվի ամռան վերջերին։ Այդ շփոթի գլուխ էր կանգնել Մանվել Բալվեցի քահանան՝ մի կորաքամակ անձնավորություն, որին Սապատող մականունն էին տվել։ Նրա ընկերն էր Սարգիս Դիպաշյան քահանան, իսկ աշխարհականներից՝ Հովհաննես Սափրիչը, Մովսես Տիվրիկցին եւ Մեծմատնյան կոչված մեկը։ Հովհաննեսը բնիկ ազուկեցի էր, ստացել էր լատինամետ կրթություն եւ քսան տարեկանից սկսած՝ գրադարության թիրախ էր դարձրել Հայոց եկեղեցին։ Դրա համար երեք անգամ պատժվել էր, եւ վերջապես, իր խոսքով, միտքը լուսավորվել էր, եւ նա եկել էր այն եզրակացության, որ ճշմարիտ ուղղափառ եկեղեցին հայկականն է։ Հետո գիրք էր հրատարակել «Լուծիչ տարակուսանաց» խորագրով եւ միանալով Մանվել քահանային՝ պայքարի նախանձախնդիր էր դարձել։ Այս խումբն սկզբում Սարգիս Սարաֆյանի դեմ դուրս եկավ՝ առիթ դարձնելով նրա արտահայտած ինչ-ինչ անզգույշ խոսքերը։ Մեջտեղ բերվեցին Երուսաղեմում նվիրակ եղած ժամանակ դրամ յուրացնելու մասին տարածված խոսակցությունները։ Սակայն Նալբանը նրան պաշտպանեց՝ Շղթայակրի տված ընկա-

լագրի փաստով, չնայած ընկալագիրը հանգանակության քանակի մասին չէր հավաստում։ Մնացած մեղադրանքները ցրում է ինքը՝ Սարգիս Սարաֆյանը։

Մանվելյան խմբակն անգամ սուլթանին ամբաստանագիր ներկայացրեց՝ ուղղված ֆրանկացյալների դեմ, թե օտար եկեղեցիներ են հաճախում՝ ապավինելով եվրոպական դեսպանների պաշտպանությանը եւ անարգելով տեղական իշխանությունները։ Այդ մեղադրանքների հիման վրա իշխանությունները 1761 թվի նոյեմբերի 11-ին հատուկ պաշտոնյաներ ուղարկեցին Ղալաթիայի Սբ Դեոդոս, Սբ Գեորգ եւ Սբ Բենեդիկտոս կաթոլիկ եկեղեցիներ, որտեղ գտնվող 52 հայերին ձերբակալեցին ու բանտ նետեցին։ Նալբանի կամքով չէր եղել բանտարկությունը, ուստի նրանց ազատելը դժվար չէր։ Սակայն մանվելյան խմբակը չհանգստացավ եւ 1762 թվի սկզբներին նոր ամբաստանագրեր մատուցեց կառավարությանը՝ հակառակ հանձնարարությանը հիշատակելով 24 անձի։ Նալբանը, այդ իմաստով, հոգ տարավ, որ ամբաստանյալները մեջտեղ չգան, եւ միայն գոհարավաճառ Հովհաննես Թումաջանյանը բռնվեց ու հարցուփորձի ենթարկվեց։ Նալբանը հայտարարեց, որ ձերբակալվածն իր հոտի հայերից է, ուստի նա ազատվեց, իսկ մնացած 23-ի ձերբակալության հրամանը վերացվեց։ Երբ մեծ վեճից բացատրություն պահանջեց, Նալբանն ստիպված եղավ հայտարարել, որ Մանվել քահանան ու Հովհաննես Սափրիչը գործել են առանց իր հրահանգի։ Այս բացատրությունը բավարար եղավ, որ ձերբակալվեց Մանվել քահանան եւ խմբակի ուրիշ անդամներ, որոնք պատրիարքին դիմեցին՝ գթության խնդրանքով։ Մանվել քահանան եւ Հովհաննեսն ազվել ուշ աքսորվեցին։

Նալբանի նման վարքագիծը ցույց է տալիս, որ պատրիարքարանը ներողամիտ վերաբերմունք ուներ լատինամետների նկատմամբ։ Իհարկե Նալբանը բուրժուական լատինամետ չէր, այլ հայադավանության համոզված շատագույն։ Բավական էր, որ հայ եկեղեցականը շահ կամ նպաստ ստանալու ակնկալիքով դիմեր Արեւմուտք եւ այնտեղ համակերպվեր նրանց պահանջներին, լատինների գրչի տակ դրանք իսկույն հռոմեադավաններ էին հայտարարվում։

Երուսաղեմի պատրիարք Թեոդորոսը խոր ծերության տարիքում տկարացել էր եւ ընկել անկողին։ Այդ պատճառով նա Հովհաննես Եպիսկոպոսին հանձնեց լիազոր փոխանորդությունը՝ մինչեւ նոր ընտրություն, իսկ իրեն հաջորդ առաջարկեց իր աշակերտ Կարապետ Գանձակեցի Եպիսկոպոսին, որը որպես նվիրակ՝ գտնվում էր Ադանայում։ Նա միաժամանակ կոնդակ արձակեց, որ իր ողջ ունեցածը, անգամ պատմունքներ ու վերարկներ, աթոռի սեփականությունն են, եւ ինքը ոչինչ չունի։ Ուստի նրա մերձավորներից ոչ մեկը չէր կարող իբրեւ ժառանգորդ հանդես գալ։ Եվ իրոք, նրա մերձավորները փորձեցին պահանջել նրա ժառանգությունը, սակայն ոչինչ չհասան։ Ավելին. արքունի հրովարտակով հաստատվեց, որ Երուսաղեմի միաբանների ժառանգորդը միաբանությունն է եւ ոչ թե՛ ազգականները։ Դրանից շատ չանցած՝ 1761 թ. դեկտեմբերի վերջին օրերին, Թեոդորոսը վախճանվեց ու հողին հանձնվեց Սբ Փրկիչ վանքում, որի համար մինչ այդ արքունի թույլտվություն էր վերցված, որպեսզի մահմեդականներն արգելք չստեղծեն։ Երուսաղեմի միաբանությունը Կ. Պոլսի պատրիարքությունից խնդրեց Կարապետ Եպիսկոպոսի հաստատումը, սակայն ազգի մեծամեծները կամեցան այդ պաշտոնում տեսնել Գրիգոր Բասմաշյան վարդապետին, որը Կ. Պոլսում էր՝ որպես Երուսաղեմի փոխանորդ։ Վերջինս, սակայն, դրան ոչ մի կերպ չհամաձայնեց, առավել եւս, որ նա Եպիսկոպոս էլ չէր, իսկ Պարսկաստանի անհանգիստ վիճակը հնարավորություն էր տալիս անմիջապես Էջմիածին գնալու։

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒՅԹՈՆՅԱՆ  
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր





# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (Հափաժո, արձակ, թատերգություն)

## Ա. ԶԱՓԱԾՈ

*Սկիզբը՝ 2012-ի թիվ 23-24, 2013-ի թիվ 1-4*

Վերադարձի եւ ինքնաորոնման այս ընթացքն ինքն իր մեջ մի ամբողջ «դիպաշարային» գիծ է, որ իր հերթին ունի իր սկիզբն ու շարունակությունը։ Այսինքնեղիս վերադառնալու զգացողությամբ՝ նա փորձում է տարբեր տարիքային-հասակային հոգեվիճակներում վերագտնել իրեն։ Այս դեպքում եւս կա սկիզբ (մանկություն), շարունակություն (պատանեկություն, երիտասարդություն) եւ վերջ (հասուն, իմաստնացած տարիք)։ Մանկության հեքիաթ աշխարհը բացվում է «Յեռու գետափից», «Ես թողել էի», «Ընկերներս», «Դուրս եկա ձեր թեւի տակից» բանաստեղծությունների մեջ։ Այդ աշխարհը փոխաբերաբար խորհրդանշում է աշխարհի մանկությունը, որն ստանում է այսպիսի պատկերային ձեւակերպում։ «Որտե՞ղ են ննջում Իմ վաղնջական Առավոտները։ Վեր կենամ գնամ, Յամբուրեմ նրանց Շաղոտ ոտները» («Որտե՞ղ են ննջում...»)։

Կյանքի տարիքային շարժման մեջ Սահյանն ի մի է բերում մարդու տարբեր հասակները։ Այդ բնույթի են «Տարիներս», «Զրնգում է կանաչ քամին» գործերը։ Վերջինն ակամա հիշեցնում է Մ. Սարյանի «Ինքնադիմանկար. երեք հասակ» կտավը, ուր նույն հարթության վրա, նույն բնության գրկում նստած, ժամանակային տարբեր կտրվածքներից աշխարհին է նայում երեք տարբեր հասակ, որ նույն մարդու կյանքն է՝ երեք տարբեր տարիներին։ Սահյանի բանաստեղծությունն առանձնանում է նաեւ գունային հստակ խորհրդանշաններով, ուր «կանաչ քամին» մանկությունն է, «կարմիր քամին»՝ պատանեկությունը, «խարտյաշ քամին»՝ հասունությունը, «ճերմակ քամին»՝ ծերությունը։


Այստեղ Սահյանը վերստին միաձուլում է երկու սկիզբ. մարդու հոգեւոր աշխարհը եւ բնության աշխարհը։ Մարդու հոգեւոր աշխարհը բացվում է ու ծավալվում՝ նրա քնարական նուրբ շնչի մեջ համատեղելով եւ ապրելու բերկրանքը, եւ հեռացումի ողբերգությունը։ Ու նորից զուգահեռը բնության հետ է։ «Թափառող թախիծն եմ հողիդ Յայրենի հեռավոր հովիտ»։ Ողբերգականության ու թախիծի շեշտերը կուտակվում են չկայացած, չափրած կյանքի զգացողությունից։ «Ինձ հաճախ այնպես է թվում, թե կյանքս տանուլ եմ տվել», - խոստովանում է նա։ Սա կյանքի կարոտից ծնված թախիծ է, որ մարդկայնորեն խոր իմաստ է տալիս նրա խոսքի ողբերգական շեշտերին։ Դրա վկայություններն են թե՛ զուտ քնարական բնույթի որոշ բանաստեղծություններ («Պատահում է սիրտդ լցվում», «Զես ասի ոչ մի բառով», «Արեւ է, անձրեւ է գալիս», «Գալու է աշունը դարձյալ»), թե՛ համեմատաբար վիպական-պատմողական բնույթի գործերից մի քանիսը («Զորս ամառ եկավ գնաց», «Յոթ ձիավորի բալլադ», «Ինչո՞ւ հիշեցի», «Եվ ի՞նչ իմանաս»)։

Անադարտ մանկության եւ հասուն տարիքի փակագծերում, որը մի ամբողջ կյանք է, ծայր է առնում ինքնաճանաչման հունով ընթացող մի մարդեղություն, որը տառապագին ցավով իմաստնացած, բայց դեռեւս լիարժեքորեն չապրված անցողիկ կյանքի երգն է։ Այստեղ դարձյալ զգացվում է բնության հավիտենական շունչը, որն ավարտվող կյանքի ուղին ոչ թե դարձնում է վերջ ամեն ինչի, այլ սկիզբ մի նոր կեցության։ Մարդը կորցնում է տարիքի զգացողությունը եւ մի տեսակ տարրալուծվում ու խառնվում է հավերժությանը։ «Մամուռն խորում կորան» բանաստեղծության մեջ մարդը հավերժությանը ձուլվում է հայկական բնակարանի այնքան բնորոշ ա-

վերակ վանքի պատկերով, որի խոյակներն ու խորանը թեւե խառնվել են իրար, բայց այն կործանումից անգամ «ահուրող» չունի։


Սա նշանակում է, որ բնության «կյանքի» մեջ մտնող մարդը ոչ թե անկյանք, պարզունակ գոյություն է, այլեւ բարդ հոգեբանության տեր անհատ։ Եվ հենց այս իմաստով ավելի է կարեւորվում բնության «կյանքի» մեկնաբանությունը որպես ներքին «ապրված» կյանք, ինչպես նրա հետ հաղորդակցվող մարդու կյանքն է։ Բնության կենդանի գոյության շոշափելի զգացողությունը մարդկային կյանքի նման հենված է շարժման օրինաչափությանը։ Ամեն ինչ բնության մեջ շարժվում է ու փոփոխվում։ դա եւ զարգացում է, եւ բնության ինքնակրկնող տարերք, եւ ժամանակների հերթափոխություն։ Բնության տեղային օրինաչափությունները տեղանքի բնույթով ձեւավորում են աշխարհագրական այն միջավայրը, ինչն իր հերթին ձեւավորում է մարդու հոգեբանությունն ու վարքագիծը։

Իր նորերում՝ «Ռուսականի մասին», ռուս գրականագետ-մշակութաբան Դ. Լիխաչեւը մարդու բնավորության եւ բնության առանձնահատուկ աշխարհագրական միջավայրի հարաբերության մասին գրում է. «Վերջին ժամանակներս մենք հաճախ մոռանում ենք մարդկության պատմության մեջ աշխարհագրական գործոնը։ Ռուսական բնության մեջ սահմանագծերը համապատասխան են մարդու եւ ձիու աշխատանքին, մարդու կարողությանը՝ քայլելու ձիու քաշած զուրանի կամ արորի ետեւից, մինչեւ որ նորից շրջվի ու առաջ գնա»։ Ըստ Լիխաչեւի՝ հողագործի փորձն այդ բնության մեջ ստեղծել է «զուգահեռ գծերի գեղագիտության», գծերի, որ ներդաշնակ են միմյանց եւ բնությանը» (Դ. Ս. Լիխաչեւ, Ռուսականի մասին, «Գարուն», 1982,



թիվ 12, էջ 38-39)։ Հայաստանի բնությունը ու աշխարհագրական միջավայրն այլ են. ուղիղ գծերին փոխարինում են սարերի ու ձորերի կտրուկ տատանումներով բնութագրվող կտրատված գծերը։ Այս առանձնահատկությանն անդրադառնում է եւ Լիխաչեւը. «Անտառագուրկ լեռներ՝ ակոսված ածրեւներից, ամպակներով, խաղողի այգիներով շերտատված լեռներ, որոնցից գահավիժում են քարեր, թանձր, պինդ գույներ. դա բնությունն է, որ ասես իր մեջ ներծծել է ժողովրդի արյունը։ Վերը ես գրել եմ, որ ռուսական բնության համար շատ բնորոշ է երկված հողի կշռույթը, չափառների եւ գերանե պատերի կշռույթը։ Կշռույթը բնորոշ է եւ Հայաստանի բնապատկերներին, սակայն Հայաստանում այն այլ է» (*Նույն տեղում, էջ 4*)։ Այս տարբերության մեջ է եւ մարդու ինքնությունը, որը տարեկից է քարին, եւ ուր մարդն ու քարը գալիս են նախաստեղծման վաղնջական ժամանակներից։ Հ. Սահյանը խորապես զգաց այդ ինքնությունը, վերապրեց «քարեղեն հուզումների» լեզուն եւ իր բնապատկերներում վերստեղծեց նրա կշռույթները, գույները, շարժումները։ Ահա նրա ինքնաճանաչման հայտը («Այն աշխարհից»)։ «Ես եկել եմ այն աշխարհից, Ուր ամեն մի սար ու քարից Զարե գետ է հոսում, Ուր բերդն է վիհ, ու վիհը՝ բերդ, Ուր ժայռերը ժայռերի հետ Աչք-ունքով են խոսում...»։

*Շարունակությունը՝ էջ 5*



*Սկիզբը՝ էջ 2*

Կասկած չունենեմ, որ եթե աւելի քան 1575 տարուայ ընդմիջումից յետոյ որոշուի գումարել քրիստոնէական եկեղեցու **չորրորդ** տիեզերածողովը, ապա այն անկասկած ս. Էջմիածնում պիտի գումարուի՝ միասնաբար վերականգնելու համար եկեղեցու վաղեմի միութիւնը։ Ահա թէ ինչու Հայաստանեայց եկեղեցու դաւանաբանութիւնը (դաւանութիւն, ժամերգութիւն, ծիսակատարութիւն եւ ազգային աստուածաբանութիւն), լինելով մի ինքնուրոյն ու անշփոթելի համակարգ քրիստոնէայ հին ժողովուրդների (հիմնական միաբնակ եւ երկաթեակ) դաւանութիւնների մէջ, **միաժամանակ այդ դաւանութիւններն իրար ազուցող-քրիստոնէական նախնական շրջանի ճշմարիտ դաւանութեանը ՄԻՈՒՐՈՂ շաղախն է նաեւ**։ Դա այդպէս է, քանի որ պաշտօնական կրօն դարձած յուսադաւանութիւնն ու կաթողիկոսութիւնը, իրենց մէջ առկայ չնչին տարբերութիւնները դարերի ընթացքում շեշտելով-ուճեցնելով, **հաւա-**

## Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին աստուածաշնչեան ժողովրդավարութեան եւ քրիստոսի եկեղեցւոյ առաքելական շրջանի ուղղափառ դաւանութեան 1700-ամեայ պատուար

**սարապէս հեռացան երեք տիեզերածողութիւնի հաստատած ճշմարիտ դաւանութիւնից**։ Մինչդէռ յուսահռոմէական դաւանութիւնների պարտադրման դեմ իր ինքնապաշտպանական 1500-ամեայ ոգորումներում Հայ եկեղեցին կատարել է ճիշտ **հակառակը**։ **Յունադաւանների եւ լատինադաւանների միջեւ առկայ դաւանական տարբերութիւնները մեր դաւանութեան մէջ հասցնելով նուազագոյնի՝** Հայաստանեայց եկեղեցին յոյներին եւ լատինացիներին մշտապէս յորդորել է ոչ թէ աւելացնել ու խորացնել տարբերութիւնները, այլ յանուն Ընդհանրական եկեղեցու միութեան՝ շեշտել ընդհանրութիւնները։ **Դրանով Հայ եկեղեցու անկախութեան պայքարն ինքնաբերաբար դարձել է քրիստոսի եկեղեցւոյ միասնութեան համար մի կատարեալ վկայաբանութիւն՝ անընդհանր փակելով ոչ էական տարբերութիւնների՝ յաճախ արհեստական խորացումից առաջացած այն վիճի, որ առկայ էր այդ երկու ուղղութիւնների միջեւ**։ Ուստի Հայաստանեայց եկեղեցին անզուգադիւր դեր խաղաց քրիստոնէական եկեղեցին դաւանական նորանոր դոգմաներից ազատելու, դրանով իսկ եկեղեցու միութիւնը վերականգնելու ուղղութեամբ՝ դեռեւս 451 թուականից սկզբնաւորելով 1910 թ. առաջացած այսօրուայ «Եւրամենիկ» անուանով շարժումը, որը համարում է մեր դարի նուաճումներից։ Իսկ ինչ վերաբերում է Հայ եկեղեցին Արեւելեան եկեղեցիների մէջ մտցնելուն, ապա

նախ հայերս երբեք մեր եկեղեցին Արեւելեան դաւանանքի եկեղեցի չենք համարել։ Մեզ Արեւելեան են համարել օտարները, որոնց մի մասը, ի դէպ, Արեւելեան է համարել նաեւ Յոյն Ուղղափառ (Օրթոդոքս) եկեղեցին... Հայ եկեղեցին պաշտօնապէս կոչել է կոչում ենք «Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցի»։ Երկրորդ՝ օտարները Հայոց եկեղեցին Արեւելեան են անուանել՝ նկատի ունենալով **աշխարհագրական դիրքը**, բայց ոչ երբեք ինքնուրոյն ծիսակատարութեամբ, պատարագամատոյցով, ժամերգութեամբ, տօնացոյցով մէկ ամբողջութիւն կազմող դաւանաբանութիւնը։ Երրորդ՝ Հայոց եկեղեցին նուիրապետական առումով արտօնելի չէ մուծել Արեւելեան եկեղեցիների մէջ։ Այդպէս է, քանի որ Արեւելեան անուանող եկեղեցիները (Ղպտի, Եթովպական, Աղուանից, յետագայում նաեւ՝ Ասորական), մեր եկեղեցու հետ միասին պահելով առաջին երեք տիեզերածողութիւնի ընդունած դաւանութիւնը, միւս բոլոր եկեղեցիների համեմատ հայոց դաւանութեան ամենամերձ եկեղեցիներն են եւ տարբեր ժամանակներում կամաւորապէս անցել են Հայոց եկեղեցու հովանու տակ (նրանցից մի քանիսի՝ Աղուանից, Վրաց, Ասորաց, քահանայապետերին ձեռնադրել ու հաստատել են Ամենայն Հայոց կաթողիկոսները)։ Բազմաթիւ փաստեր կան, որ 2 դարից սկսած՝ Ասորաց եկեղեցին քանիցս դիմել է Հայաստանեայց եկեղեցու օգնութեանը՝ ընդդէմ հերձուածողների, եւ միշտ

էլ այդ օգնութիւնը ստացել է (Արշակ Տեր-Միքէլեան, էջ 109)։ Նշուած եւ այլ հանգամանքներից ելնելով՝ պիտի եզրակացնել, որ մեր եկեղեցին այլադաւանութեան դեմ պայքարի առաջնորդն է եղել Արեւելեան կոչող եկեղեցիների մէջ եւ նրանց բարոյական նեցուկն այդ խնդրում։ Այս հանգամանքով այդ խմբի եկեղեցիները մտնում են Հայադաւան եկեղեցու հետեւորդների ընտանիքի մէջ, ինչպէս իսպանացիները, լեհերը եւ այլ ազգեր կազմում են Կաթողիկ եկեղեցու ընտանիքը, բուլղարները, վրացիները, ռուսները եւ այլ ազգեր՝ Յունադաւան (Օրթոդոքս) ընտանիքը։ Ուստի պատահական չէ, որ Օսմանեան պետութիւնը վերոյիշեալ եկեղեցիները ժեղ. երկրորդ կէսից մինչեւ անցեալ դարակեսը պաշտօնապէս անուանել է «Հայոց պատրիարքներից կախում ունեցող արեւելեան ժողովուրդների խումբ» (*Մաղաքիա արք. Օրմանեան, Հայոց եկեղեցին, էջ 232*)։ Յետեաքար՝ Ասորական, Ղպտի, Եթովպական, նաեւ Զաղդեցիների եկեղեցիները, որոնց մէջ են օտարներին հետեւող անտեղեակները մուծում մեր եկեղեցին, **կամաւորապէս** Հայաստանեայց եկեղեցու հովանու տակ մտած, սակայն իրենց ինքնուրոյնութիւնն ու ազգային յատկանիշները առաւելագոյնս պահպանած եկեղեցիներն են։

Սրանք են բազմաթիւ փաստերից գլխաւորները, որոնք հիմք ընդունելով՝ շեշտում ենք այն աներկբայելի իրողութիւնը, որ թէւեւ Հայաստանը գտնուում է Արեւելքում, բայց Հայաստանեայց եկեղեցին դաւանաբանական ու նուիրապետական առումով արտօնելի չէ Արեւելեան եկեղեցիների մէջ մուծելը։ **Հայաստանեայց եկեղեցին իր ճշմարիտ դաւանութեամբ, ծիսակարգով, դաւանաբանական 1700-ամեայ վիթխարի ժառանգութեամբ եւ կազմակերպական խիստ իւրայատուկ ու եզակի ժողովրդավար կառուցով եղել եւ մնում է Արեւելեան ու Արեւմտեան եկեղեցիները միաւորող շաղախը**։

*Շարունակությունը՝ էջ 6*



# Հայոց ցեղասպանության ազդեցությունն արեւմտահայ մշակույթի վրա

Սկիզբը՝ թիվ 3-4

Վերադառնալով եղեռնից հետո ստեղծված գրականությանը՝ ասենք, որ բնավ սփյուռքահայ ոչ բոլոր գրողներն էին խույս տալիս հայության գերխնդիրները լուսաբանելուց: Հատուկ հիշատակության է արժանի Վահան Թեքեյանի անունը: Նա արեւմտահայ մեծագույն բանաստեղծներից մեկն է: Թեքեյանը Հայոց Մեծ եղեռնը չէր տեսել, ուստի նա գրում է հայ տարագրի հոգեկան ցավի, նրա միայնության զգացումի մասին: Անցյալը հետապնդում է Թեքեյանի հերոսին, իսկ ներկան պարզապես անընդունելի է նրա համար: Վահան Թեքեյանի գրվածքներն իրենց վրա կրում են հայոց ցեղասպանության ներագոյությունը, սակայն բուն եղեռնը, փաստորեն, պատկերված չէ բանաստեղծի կողմից: Ամերիկահայ գրող են գրաքննադատ Վահե Օշականի կարծիքով՝ սիրո երգիչ Թեքեյանին ամենաքիչն է համապատասխանում հայոց վիշտն արտացոլողի ու արտահայտողի դերը: Բայց եւ այնպես նա գրել է եղեռն վերապրած հայի ծանր հոգեվիճակների մասին: Վահան Թեքեյանի պոեզիայում ընթերցողը տեսնում է խղճմտանք, կարեկցանք եւ ֆրոստացիայի ենթարկված ցասումի զգացումներ, որոնք պարզապես խեղդում են բանաստեղծին այն ժամանակ, երբ նա գրում է հայ ազգին տիրած հույզերի ու զգացումների մասին: Չարմանալի է, բայց Թեքեյանի քնարերգության մեջ չկա բացահայտ ատելություն թուրքերի հանդեպ: Բանաստեղծը նույնիսկ չի փորձում հասկանալ «ցեղասպանություն» երեւոյթի էությունը: Թեքեյանն ընդամենը մի քանի տողով շատ զուսպ ձեւով արտահայտում է իր ընդվզումն Աստծո եւ մարդկության դեմ, սակայն նրա ամենահաջողված երկերն այն բանաստեղծություններն են, որոնցում նա արտահայտում է հույս ապագայի հանդեպ, նաեւ այն բանաստեղծու-



թյունները, որոնցում նա ողբում է նահատակվածների համար եւ աղերսում արդարություն իր ազգի համար: Սփյուռքահայ մտավորականի մորմոքն այնքան մեծ է, որ նա պարփակվում է ինքն իր մեջ: Ինչ-որ իմաստով Վահան Թեքեյանը մարմնավորում է իր ազգի խիղճը, եւ այս նույնացումը հրաշալի կերպով դրսևորվում է նրա «Մենք կասենք Աստծոն» բանաստեղծության մեջ: Այս բանաստեղծության մեջ ընթերցողին ապշեցնում է այն, որ Թեքեյանը բացարձակապես ատելություն չի ցուցաբերում թուրք ժողովրդի հանդեպ: Նման տրամադրվածությունը, հույսի արտահայտությունը եւ նոր կյանք սկսելու անհրաժեշտության շեշտադրումը բնորոշ են ոչ միայն Վահան Թեքեյանին, այլեւ Սփյուռքի մյուս տաղանդաշատ արվեստագետներին՝ մասնավորապես Նիկողոս Սարաֆյանին, Լեւոն Սյուրմեյանին եւ Կոստան Չարյանին: Հիշատակված հայ գրողների լավատեսական տրամադրվածությունը վկայում է, որ ցեղասպանությանը հաջորդած հիսուն տարիների ստեղծագործական անկումը հետզհետե մոտենում էր իր ավարտին:

Հայոց ցեղասպանության թեման առավել խոր լուսաբանած գրողներից է արձակագիր Հակոբ Օշականը: Վերջինս այն փոքրա-

թիվ գրողներից էր, որը թուրքերին ճանաչել էր բավականաչափ լավ, որպեսզի կարողանար պատշաճ կերպով պատկերել կոտորածը: Հակոբ Օշականն ապրել էր թուրքական միջավայրում՝ իր հարազատ գյուղում, ինչպես նաեւ Կոստանդնուպոլսում: Այստեղ թուրքական ոստիկանությունը երեք տարի շարունակ հետապնդում էր նրան, մինչեւ որ նա 1918 թ. ապաստան գտավ Բուլղարիայում: Հայոց ցեղասպանության ազդեցության ներքո Հակոբ Օշականը, որն սկզբում կարճ պատմվածքներ էր գրում, դարձավ վիպասան: Օշականը շատ բեղմնավոր ստեղծագործական միտք ուներ. նա տասնմեկ վեպ է ստեղծել: Դրանց թեման հայ ժողովրդի գլխով անցած փորձություններն են 1894-ից մինչեւ 1915 թ.: Հակոբ Օշականի երկերն արեւմտահայ գրականության ամենահավակնատ նախածեռնությունն են: Սփյուռքահայ հեղինակը բալզակյան ձևով պատկերում է հայկական գյուղական հասարակության փոխակերպումը քաղաքային հասարակության: Այս ողջ գործընթացը ներկայացվում է թուրքական բռնաճնշումների, Օսմանյան կայսրությունում հայ հեղափոխական պայքարի եւ թուրք հայկական ազգային հակամարտության ֆոնի վրա (ամենա-

հայտնի երկը «Մնացորդած» ավանդապես է, որի կարճ դրամատիկ դրվագներից մեկը թարգմանել է Ա. Սեւակը եւ հրատարակել «Արարատ» ամսագրի 1983 թվականի առաջին համարում): Հիշատակված ստեղծագործությունը պետք է որպես նախաբան ծառայեր Հակոբ Օշականի «Դժոխք» մեծավերջ երկի համար, որի թեման 1915-18 թթ. լայնամասշտաբ կոտորածներն են: 1948 թ. Օշականը պատրաստվում էր գրել Սիրիայի Դեր Չոր անապատի սպանդի մասին, սակայն հանկարծահաս մահը խաթարեց գրողի ծրագիրը:

Հակոբ Օշականի կարծիքով՝ ժողովուրդները եւ գրականությունը ապրում են առասպելների միջոցով, որոնք հաճախ փոփոխվում են կամ մեղմում ժամանակի ընթացքում: Հայերի դեպքում Մեծ եղեռնից առաջ գոյություն ունեցած հասարակության առասպելները հասել էին իրենց ավարտին, բայց եւ այնպես դրանք շարունակում են ապրել: Այսպիսով ոչ մի նոր քաղաքային առասպել չի կարող առաջանալ: Մեծ եղեռնը վերջ տվեց հին աշխարհին ու միեւնույն ժամանակ ծնունդ տվեց Սփյուռքին, սակայն հին աշխարհի առասպելական բոլորաշրջանների երկարածգումը դեպի մեր օրերը խոչընդոտում է իսկական Սփյուռքի առաջացմանը: Հակոբ Օշականն ուզում է վերջ դնել հին աշխարհին, եւ դա հնարավոր է անել միմիայն գրական գործունեության միջոցով, որը ջախջախում է «արհավիրք» կոչվող իռացիոնալ իրադարձությունը: Այդ արհավիրքը՝ այն է հայոց ցեղասպանությունը, կարծես մխրճվել է հայ ազգի գիտակցության եւ նրա գրական երեւակայության մեջ (տե՛ս R. Hovhannisian, Նշվ. աշխ., էջ 173): Մինչեւ այդ արհավիրքը չհաղթահարվի, եղեռնի ազդեցությունը չի վերանա, ոչ մի նոր առասպել չի ստեղծվի, ու հայության կյանքը չի կանոնավորվի: Նման պարագայում ոչ մի լուրջ գրական

երկ չի կարող ստեղծվել: Օշականը հայոց ողբերգությունը դիտարկում է համամարդկային համատեքստում, որում թուրքերն ու հայերը կյանքի են կոչում մահվան ու ծննդան, ոճրի ու պատժի, ատելության եւ ավանդույթի մասին հնադարյան առասպելները:

Թեեւ Հակոբ Օշականի ստեղծագործական ծրագրերն անավարտ մնացին՝ անժամանակ մահվան պատճառով, սակայն նա արդեն իսկ քիչ բան չէր արել իր ազգի համար եւ հայոց ցեղասպանությունն աշխարհին ներկայացնելու հույժ կարեւոր գործում: Հակոբ Օշականն ինքն էլ լավ էր հասկանում իր երկերի դերն ու նշանակությունը: Սփյուռքահայ գրողի համոզմամբ՝ իր ստեղծագործությունները կարեւոր են նույնիսկ թուրք ժողովրդի համար: Նրա հավատալիքով՝ թուրքերը մի օր ստիպված կլինեն կարդալ իր գրքերը, որպեսզի հասկանան իրենք իրենց (տե՛ս R. Hovhannisian, Նշվ. աշխ., էջ 173):

Մինչ օրս գրվել են մի քանի գրքեր տեղահանության եւ կոտորածների ակնատեսների կողմից, սակայն դրանք գրականագիտական տեսանկյունից հետաքրքրություն չեն ներկայացնում, քանզի գրական արժեք չունեն: Առաջին սերնդի սփյուռքահայ գրողներն ստեղծել են մի շարք երկեր, որոնցում նրանք իդեալականացված եւ քնարական ոճով ներկայացնում են իրենց մանկությունը մինչեւ ցեղասպանությունը: Գրողներից շատերը նաեւ գրել են մանկատներում եւ պատանեկության հասակում վերապրած տառապանքների ու մաքառումների մասին: Այս երկերն արժեքավոր նպաստ են հայ գրականության ասպարեզում: Բայց եւ այնպես հայ գրողների գերակշռող մասին չի հաջողվել բուն ցեղասպանությունը պատկերել այնպես, որ այն լիովին հասանելի լինի համայն մարդկությանը: Այս իմաստով հրեաները զգալիորեն տարբերվում են հայերից, քանի որ նրանք կարողանում են աշխարհին լավ ներկայացնել թե՛ իրենց ազգային արժանիքները եւ թե՛ ողբերգությունները:

Շարունակությունը՝ էջ 6

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 4

Բնաշխարհի գծագրությունը Սահյանի քնարերգության մեջ որոշակիանում է թե՛ լեռներով ու քարափներով, գետերով ու ջրվեժներով, առուներով ու արահետներով, թե՛ այդ տեղանքի վրա ապրող կենդանի արարածներով ու բուսականությամբ եւ թե՛ բնաշխարհը քարտեզագրող աշխարհագրական տեղանուններով: Բնաշխարհը ե՛ւ իրականում, ե՛ւ բանաստեղծական պատկերների շրջագծում երեւում է ոչ միայն իր կայուն ձեւերի ու վիճակների մեջ, այլեւ անընդմեջ շարժման ու փոփոխությունների: Ըստ այդմ՝ բնաշխարհը երեւում է օրվա տարբեր պահերին (առավոտ, կեսօր, մայրամուտ), լույսի ու մութի տարբեր ցուլափոխանքի մեջ, երբ քարափները մե՛կ կարմրին են տալիս, մե՛կ՝ կապտում, երբ լեռան ստվերը մե՛կ երկարում է, մե՛կ՝ կարճանում: Նույն սկզբունքով օրվա պահերը փոխվում են տարվա պահերի՝ չորս եղանակների: Անընդմեջ շարժմամբ այս աշխարհը բացում է իր ձեւերը, գույները, բույրերը:

Բնաշխարհի գույների զգացողությունը Սահյանի պոեզիայում առանձնահա-

տուկ տեղ ունի: Այն համադրության տարր է, որ իրենց որոշակի խորհրդանշական իմաստն ունեցող թռչունների, բույսերի, բնության զանազան երեւույթների համաձուլվածքով բանաստեղծի խոսքը դարձնում են ցայտուն ու արտահայտիչ: Այդպիսին է «Իջավ սարյակը դաշտում...» բանաստեղծությունը, ուր կանաչ, կարմիր, դեղին, ճերմակ տողերի խորհրդանշանով Սահյանը բացում է հոսող ու փոփոխվող կյանքի ամբողջ դրամատիկ շարժումը: Ընդ որում՝ գույների «կյանքը» եւս նա անընդհատ տեսնում է լույսի ու ստվերի շարժման մեջ:

Սահյանի բնաշխարհն ապրում է նաեւ շշուկների, որոտների, ճիչերի, աղմուկաղաղակի ձայնակարգությամբ: Առավոտից իրիկուն տարվա բոլոր եղանակներին իրար հետ «խոսում ու վիճում» են գետն ու քամին, ամպն ու քարը, ծառն ու շողքը:

Այս ամենը, որ իր բոլոր մանրամասներով դառնում է գեղարվեստական պատկեր ու բանաստեղծական բովանդակություն, դեռեւս չի սպառում բնաշխարհի գեղարվեստական գրանցումը: Մարդու եւ բնության փոխառնչության մեջ կարեւոր տեղ ունի մեկ առանձնահատուկ շարժում

եւս: Դա այն է, որ մարդն անընդհատ փոխում է իր դիրքը բնության մեջ: Տարբեր դիրքերից բնությունը նախ արթնացնում է տարբեր զգայություններ, եւ ապա փոխվում են հարաբերությունների եզրերը: Հայտնաբերվում է մի նոր դիտանկյուն՝ ծնունդ տալով այսպիսի պատկերների. «Հիմքից շուռ եկած, գլխիվայր կախված Բարձրություններ են քո անդունդները, Եվ գագաթներդ աստղերին հասած Անվերժանելի խորություններ են» («Հիմքից շուռ եկած...»), կամ՝ «Այս իմ հրաշք աշխարհն է, ուր Գլխիվայր են ծառերն աճում, Եվ ջրվեժներն ալեփրփուր Դեպի երկինք են շառաչում» («Այս իմ...»):

Այս միշտ նույն ու միշտ տարբեր աշխարհը բնութագրվում է ե՛ւ երեւույթների, առարկաների խորացումով ու թանձրացումով, անընդհատ կրկնապատկումով, ե՛ւ խորությամբ, ե՛ւ բարձրությամբ: Ու ստացվում են բնաշխարհը ճշգրիտ արտացոլող այսպիսի պատկերներ. «Այստեղ սարեր կան սարերի վրա, Եվ ձորերի մեջ ձորեր կան մթին» («Այստեղ...»), «Մութը մութով է լցվել» («Ի՛նչ անեք, ասա՛»), կամ՝ «Մտնում են երկինք» բանաստեղծության այս քառատողը:




Լեռները գնում մտնում են երկինք, Ձորերը գալիս, կիրճերն են մտնում: Խավարն է մթնում բարձրության ահից, Խորության ահից աստղերն են քրտնում:

Այս միջոցներով Սահյանը հասնում է պատկերի արտակարգ գեղարվեստական խտացման, կարողանում ճշգրտորեն բառը ծեփել քարին, քարը դարձնել բառ:

Շարունակությունը՝ էջ 7

# ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2013 թ.)



## Վահրամ քահանա Մելիքյան ՕՐԿԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ: Մեծ դահիճի ամենօրյա խորհրդածություններ

Գրքում հեղինակը ներկայացնում է իր ամենօրյա մտորումները Մեծ պահքի խորհրդի, հոգեւոր ու մարմնական պահեցողության առանձնահատկությունների մասին՝ հիմնված օրվա սուրբգրային ընթերցվածքների վրա: Գիրքը նաեւ օգտակար տեղեկություններ է հաղորդում Հայ Եկեղեցու տոների, ծիսակարգի, աստվածաշնորհության եւ աստվածաբանության, ինչպես նաեւ Աստվածաշնչի առանձին գրքերի մասին:

Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

## Վերջաբանի փոխառեն

Ահա եւ ավարտին մոտեցավ Մեծ պահքի շրջանը: Արարչի եւ արարածի համատեղ հոգեւոր ճամփորդությունը, որի ընթացքում Տիրոջ անտեսանելի գորակցությամբ ու խնամքով մարդը ջանում է ճանաչել ինքն իրեն, բացահայտել իր հոգին եւ մաքրել այն տարբեր տեսակի կեղծ արժեքներից, սին մղումներից եւ հոգեկործան մեղքերից:

Մեծ պահքի շրջանն է, որ հավատացյալներին առիթ է ընձեռում լավագույնս ըմբռնել մեր կյանքի իմաստն ու հավատամքը եւ դավանվող մեր արժեհամակարգի պրիմակով դիտարկել տերուական հետեւյալ խոսքը. «Ես իսկ եմ հարություն եւ կյանք. ով հավատում է Ինձ, թե՛ պետ եւ մեռնի, կպարի. եւ ով կենդանի է ու Ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի» (Հովհ. ԺԱ 25-26): Հարության հույսն է այն հիմնաքարը, որի վրա հաստատված է քրիստոնեական մեր հավատը, որով իմաստավորվում են Միածին Որդու մար-

դանալը, երկրային առաքելությունը, չար-չարվելը, խաչվելը եւ թաղվելը: Այս կապակցությամբ հիշենք նաեւ Պողոս առաքյալի խոսքը. «Եթե մեռելների հարություն չկա, ապա եւ Քրիստոս հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս հարություն չի առել իզուր է մեր քարոզությունը, իզուր է եւ ձեր հավատը» (Ա Կորնթ. ԺԵ 13-14):

Եթե մենք չենք ձգտում այս ամենը վերապրել Նրա հետ, չարչարակից լինել Նրան, Նրա հետ թաղվելով՝ հառնել իբրեւ «նոր մարդ» եւ Տիրոջ Սբ Հարության լույսով խանդավառվել ու գործնալ մեր սպասման մեջ, ապա զուր են Մեծ պահքի ընթացքում կամուփին ստանձնած գրկանքները եւ կրած չարչարանքները: Եթե Մեծ պահքի հոգեւոր եւ մարմնական պահեցողությունը մենք չենք ամփոփում Ավագ Հաբաթվա հուզական խորհրդով եւ փոխակերպող գործություն ունեցող արարողություններին մասնակցությամբ, ապա միանգամայն ունայն են մեր բոլոր ջանքերը: Մեծ պահքն ընդամենը միջոց է պատրաստության՝ ամբողջությամբ ըմբռնելու, համակվելու Տիրոջ Սբ Հարությամբ: Մինչ Ավագ Հաբաթ մուտք գործելը մենք մաք-


րում ենք մեր հոգին զանազան ախտերից, որպեսզի սրբությամբ հավելվի «մտքից ու խոսքերից վեր» գտնվող խորհրդին՝ բժշկվենք եւ պարգևենք մեր հոգիներին Սբ Հարության եւ իրական կենդանության ու խաղաղության աննկարագրելի ապրումը:

Մեծ պահքին մենք կարողացանք ինքնաքննությամբ մեր հոգում արթնացնել կարոտն արարչապարգեւ երջանկության, ջինջ ու պայծառ արժեքների ու առաքինությունների, որոնք այս աշխարհի կողմից հաճախ տկարություն են նկատվում: Սակայն նման պարագաներում մշտապես մտաբերենք առաքելական հորդորը. «Աստծու տկարն ավելի զորեղ է, քան մարդկային զորությունը» (Ա Կորնթ. Ա 25):

Կարելի է հասկանալ, որ Մեծ պահքը հրավեր չէ՝ մեզանում բորբոքելու անշուշափելի կամ վերացական արժեքներ, առաքինություններ եւ անանձնական սեր, այլ հստակ պատվեր է՝ այդ ամենը վերափոխելու բարի գործերի, որովհետեւ քրիստոնեությունը անդրանցական մի հավատ չէ, այլ վարդապետություն, որի դավանմամբ «Ինչպես որ մեռած է մարմինը առանց հոգու, այնպես էլ մեռած է հավատը առանց գործերի» (Հակ. Բ 26): Այս համոզումը պետք է առաջնորդի մեզ մեր հավատի ճշմարիտ դրսևորման մեջ:

Մեծ պահքի արդյունքում է, ըստ իս, որ մարդը, տերուապարգեւ իր շնորհները դնելով աստվածահաճո գործադրության մեջ, պետք է վերափոխվի եւ պտղաբերի Սբ Հոգու պտուղներով, որոնք են՝ «սեր, խնդություն, խաղաղություն, համբերություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն» (Գաղ. Ե 22-23):

Ուստի, Ավագ Հաբաթ մուտք գործելը մեր հոգու բոլոր այս պտուղներով, որպեսզի ընթանանք ըստ Հոգու, ապրենք ու պարծենանք միայն Քրիստոսով, Ով ՄեՐ է: Եվ միայն Նա՝ Ամենախնամ Փրկիչը, կարող է Հարության Իր հույսով, հրաշքով ու ողորմությամբ վերափոխել, ապրեցնել ու փրկել մեզ:



Մեծ պահքի ավարտն ազդարարում է սկիզբն Ավագ Հաբաթվա, որի օրերի խորհուրդն ու արարողությունները համառոտաբար ներկայացվում են ստորև:

## Ծաղկազարդ

Սուրբ Հարության տոնից մեկ Հաբաթ առաջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին նշում է Ծաղկազարդը, որ խորհրդանշում է Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, ինչը նկարագրում են բոլոր ավետարանիչները՝ մանրամասնելով, թե ինչպես է Ժողովուրդը փառաբանությամբ ու օրհնությամբ դիմավորում Տիրոջ գալուստը: «Եվ բազում ժողովուրդ իրենց զգեստները փռեցին ճանապարհի վրա, իսկ ուրիշներ ծառերից ճյուղեր էին կտրում ու սփռում ճանապարհի վրա» (Մատթ. ԻԱ 9): Ժողովրդի բազմությունը աղաղակում էր ու ասում. «Օվսանսա, օրինյալ՝ լինես դու, որ գալիս ես Տիրոջ անունով» (Հովհ. ԺԲ 13):

Շարունակությունը՝ էջ 8

## Հայոց ցեղասպանության ազդեցությունն արեւմտահայ մշակույթի վրա



Սկիզբը՝ էջ 5

Ասկածից թող չստեղծվի այն թյուր կարծիքը, թե հայ մտավորականներն ապաշնորհ են ու անճարակ եւ ընդհանրապես ունակ չեն ուղղորդելու հայ ազգին արդի ժամանակների պատմաքաղաքական իրադարձությունների բավիղներում: Պարզապես մեր ժողովրդին փղք-ինչ պակասում է համախմբվածությունը եւ փոխհամաձայնեցված գործողություններ կատարելու կարողությունը: Թերեւս սա է այն պատճառներից մեկը, որ հայերը, ի տարբերություն հրեաների, մինչ օրս չեն կարողացել վերագտնել իրենց հայրենիքը՝ Արեւմտյան Հայաստանը: Ի դեպ, գրաքննադատ Վահե Օշականը տեսակետ է հայտնում, որ հենց հայրենիքի

անդարձ կորուստն է սահմանափակել ու ընկճել սփյուռքահայ գրողների ստեղծագործական ներուժը: Օշականի կարծիքով՝ ստեղծված իրավիճակը կարող է շտկվել միմիայն պատմական Հայաստանի վերաստեղծման պարագայում (տե՛ս R. Hovhannisian, նշվ. աշխ., էջ 175): Անկասկած, Վահե Օշականի տեսակետի մեջ կա որոշակի ճշմարտություն, սակայն ճիշտ չի լինի սփյուռքահայ գրողների ծախողումները լիովին կապել հայրենյաց երկրի կորստի հետ: Առավել տրամաբանական կլինի ենթադրել, որ խնդիրն իրականում հայ մտավորականության սերունդի ոչնչացման մեջ է: Այդ մշակութային ընտրախաղը, ցեղասպանության ընթացքում ողջ մնալու դեպքում,

անտարակույս ծնունդ կտար ու կկրթեր հայ մտավորականության հաջորդ սերնդին: Այսպիսով հայ մշակույթի զարգացումը կընթանար բնականոն ուղիով: Բացի այդ, հայ ազգը, ինչպես արդեն ասվել է, վիթխարի մարդկային կորուստներ է ունեցել, իսկ հայ նահատակների հսկայական զանգվածի մեջ շատ հնարավոր է եղած լինեին բնատուր ձիրքի տեր հազարավոր մարդիկ, ովքեր բարենպաստ պայմանների առկայության դեպքում կդառնային Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Գրիգոր Զոհրապի, Ռուբեն Սեւակի եւ մյուս մեծերի արժանի հետևորդը: Ինչեւէ, անելանելի իրավիճակներ գրեթե չեն լինում. մարդկային ու մշակութային ռեսուրսների վերականգնումը միանգամայն հնարավոր է, պարզապես դրա համար ջանքեր եւ տեսական ժամանակ է պահանջվում: Իսկ Վահե Օշականի քննադատությունը, ըստ երեւոյթին, ավելի շատ ուղղված է Սփյուռքի հայալեզու գրականության դեմ: Միևնույն ժամանակակից սփյուռքահայ գրականությունը, հատկապես անգլիագիր գրականությունը, շոշափելի նվաճումների է հասել: Որպես վառ օրինակ կարելի է բերել Փիթեր Բալաքյանին, որն իր «Ճակատագրի սեւ շուրջ» (1997) վեպով կարողացավ անգլիալեզու ընթերցողներին հաղորդակից դարձնել համաշխարհային հիմնախնդիրներին: Ինչեւէ, օտարագիր գրողների երկերի լուսաբանումը չի մտնում սույն հոդվածի նպատակային ուղեծրի մեջ, ուստի եւ այսքանով սահմանափակում ենք արժարժված թեմայի վերլուծությունը:

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ  
Բանասիրական գիտ. թեկնածու

## Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին աստուածաշնչեան Ժողովրդավարութեան եւ Քրիստոսի Եկեղեցւոյ առաքելական 2ր- ջանի ուղղափառ դաւանութեան 1700-ամեայ պատուար

Սկիզբը՝ էջ 4

## ԱՄՓՈՓՈՒՄ

Աներկբայելի ճշմարտութիւն է, որ մարդկային սոր քաղաքակրթութեան արեւածագը քրիստոնեութիւնն էր, որը եղել եւ մնում է մարդու եւ ազգերի ազատութեան, առաջընթացի ու եղբայրութեան, ժողովրդավարութեան ու ընկերային արդարութեան առանցքը, յենարանն ու բարձրակետը: Հայաստանը ս. Գրիգոր Լուսավորչի ու ս. Տրդատ Մեծի ժամանակներում առաջին ու միակ երկիրը եղաւ աշխարհում, ուր իշխանութիւնը պետականօրէն բանեցում էր առաքելական շրջանի քրիստոնեական համայնքներում գործող քրիստոնեութեան բարոյականութեան եւ համակեցութեան սկզբունքներով: Այս հանգամանքով մեր ժողովուրդը դարձաւ քրիստոնեութեան բարոյականութեան եւ համակեցութեան սկզբունքներով ԱԶԳՈՎԻՆ առաջնորդող առաջին ու միակ ազգն աշխարհում: Հայաստանեայց Եկեղեցին իր ապակեդրոն ու Է՛լ աւելի բիրեղացնելով մեր ժողովրդի հոգեբանութեան մեջ հայկազունեաց ժամանակներից շարունակ տրոփող ազատութեան, անկախութեան ու ժողովրդավարութեան բնական որակները, դրանք դարձրել է հայութեան արեան մեջ ամրագրուած հոգեբանական ու կազմախօսական անօտարելի եւութիւն:

Հայաստանեայց Եկեղեցու դաւանաբանութիւնը, իր մեջ ներառելով մեր ազգային խառնուածքի, բնաւորութեան ու պատմական հոգեբանութեան ամենաբնորոշ տարրերը, լիովին հայացաւ:

Հայաստանեայց Եկեղեցին պահպանել է քրիստոնեական նախնական շրջանի անաղարտ դաւանութիւնը եւ յետագայ դարերում երկու ճակատով մարտնչել է քրիստոնեութիւնը երկու ծայրայեղութիւններից հեռու պահելու համար: Հետեւաբար՝ Հայաստանեայց Եկեղեցին իր ճշմարիտ դաւանութեամբ, ծիսակարգով, դաւանաբանական 1700-ամեայ վիթխարի ժառանգութեամբ եւ կազմակերպական խիստ իւրայայտուկ ու եզակի ժողովրդավար կառոյցով եղել եւ մնում է նաեւ Արեւելեան ու Արեւմտեան Եկեղեցիները միաւորող շաղախը:

Ռաֆայէ ՔԱՄԱՐԶՈՒՄԵԱՆ  
Պատմական գիտ. թեկնածու



Նկարչի վերջին լուսանկարը

Այս օրերին Հայաստանի կերպարվեստը ծանր ու անդառնալի կորուստ կրեց. կյանքի 90-րդ տարում վախճանվեց Հայաստանի ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ եւ ՀՀ պետական մրցանակների դափնեկիր, Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ» շքանշանի ասպետ Հակոբ Հակոբյանը:


Մտայնություն կա, որ իբր անփոխարինելի մարդիկ չկան: Գուցե, եթե խոսքը վերաբերում է ուրեւէ պաշտոն, որեւէ աթոռ զբաղեցնելուն: Սակայն գիտե՞նք նաեւ, որ ամեն մարդ, ամեն մի անձնավորություն անկրկնելի է, եզակի, նմանը չունեցող: Եթե մարդն անկրկնելի է, ապա որքան անկրկնելի ու անփոխարինելի է ստեղծագործական վառ անհատականությունը, սեփական ինքնատիպ ու առնչվող աշխարհ, խոհ ու ապրում ունեցող արարող մարդը, աստվածատուր արվեստագետը: Ահա այս առումով էլ հիրավի անփոխարինելի են Հակոբ Հակոբյանի անձը, ձեռագիրը, ժառանգությունը, անփոխարինելի է նրա վաստակած տեղը Հայաստանի կերպարվեստի աշխարհում:

Եգիպտոսում ծնված, մեծացած, կրթություն ստացած Հակոբյանը հայրենադարձվեց 1962 թ., երբ արդեն 40 տարեկան էր եւ ուներ իր սեփական ձեռագիրն ու աշխարհընկալման հստակ կերպը: Առաջին հայացքից թվում է՝ հայաստանյան տարիները ոչինչ չփոխեցին նրա գեղարվեստական մտածողության մեջ, սակայն կարճ ժամանակ անց ոչ թե նրա, այլ մեր ընկալումները վերանայելու արդյունքում, հանձին Հակոբ Հակոբյանի արվեստի, ու-

# ԱՄԵՆԱԼՈՒԱԿՅԱՑ ՈՒ ԽՈՍՈՒՄՆ ՆԿԱՐԻՉԸ

Նեցանք մի այլ հայկականություն, մի այլ հայկական շունչ ու շնչառություն: Նրա գտած ուղին եւս նախնիների գցած այն ճանապարհն էր, որը համաշխարհային մշակույթում թողել է իր ոչ պակաս առնչվող ու անկրկնելի դրոշմը: Այստեղ տեղին է հիշել Մինաս Ավետիսյանի խոսքերը նրա մասին. «Մենք մի օգտակար դաս ենք քաղել մեր սիրելի, հազվադեպ տաղանդով օժտված ընկերոջից. հայ մարդու իսկական հատկանիշներով նա առնչում է մեզ արվեստի պատմության ամենաուսանելի դասին: Սեփական հոգու աչքերով է նա տեսնում աշխարհը, ուր նա մտնում է որպես եզակի երեւոյթ եւ զգացնել տալիս, որ մայր հողից սերել է վաղուց, շատ վաղուց»:

Հակոբյանի ամուր, ինչ որ տեղ նաեւ էպիկական վրձինը մեզ է թողել թեմատիկ գործերի, դիմանկարների, բնակարանների ու նատյուրմորտների մի ողջ պատկերասրահ՝ ոճական միասնականությամբ, իրերի ու առարկաների ընդհանրացված հիմնագծերով, գույնի ու գունաթույրերի զուսպ ու ներդաշնակ անցումներով, ծավալի, մակերեսի ինքնատիպ ու պնդաճ մշակումներով, որոնց շնորհիվ էլ ուզածը հարուստ հավաքա-



ծուում կարելի է հեշտությամբ որսալ նրա ձեռագիրը: Այդ ձեռագիրը, չնայած խորհրդային գաղափարախոսության պարտադրանքին, բացառապես գեր է կեղծ ու արհեստական հնչերանգներից, մտացածին էֆեկտներից, ասելիքի անհարկի ու սին ճոռմաբանությունից: Ամբողջության մեջ Հակոբյանի արվեստը շահեկանորեն առանձնանում է հայկական միջնադարյան ճարտարապետությանը բնորոշ վեհությամբ ու խստությամբ, միջնադարյան շարականներին բնորոշ ներքին հուզականությամբ: Փորձենք վերհիշել նրա բնակարանները, որոնք ասածիս լավագույն օրինակներն են («Հայկական մոտիվ», «Առավոտը Աղավաճառում», «Մայիշկա գյուղը. Կեսօր», «Լեռնային ճանապարհ» եւ այլն): Նրա բնակարանները գնահատելիս մենք Սարյանը նկատում է. «Հակոբյանը իր ժամանակը խոր ապրող եւ սիրող պաշտամունք ունեցող նկարիչ է: Նրա ինքնօրինակ բնակարանները թեւեւ դիտվում են ամառի, բայց շնչում են հարուստ ոգով: Այսպես հաղորդվել բնության հետ նշանակում է գերազնվություն պարզել»:

Հակոբ Հակոբյանը մեր կերպարվեստի ամենալուսավոր եւ միաժամանակ ամենախոսուն նկարիչն էր: Նրա գործերն առաջին հայացքից դիտողին գերում են իրենց զարմանալի խաղաղությամբ, զարմանալի այն անդորրով, որ հաճախ ստիպում են մարդուն կտրվել դարի աղմկաշատ ռիթմից եւ ըմբռնվել մեղեդիական փիլիսոփայական են-

թառեքստերի խոհն ու ապրումը, մարդու եւ բնության չմիջնորդավորված երկխոսությունը՝ անցավորի ու անանցի մշտնջենական գոյակցության մտորումներում: Նրա պատկերներն ու կերպարներն ասես խոսում են իրենց իրենց հետ՝ լուռ ու անհաղորդ: Բայց սա միայն առաջին հայացքից: Խորքում դրանք չափազանց խոսուն են, ժայթքող, ասելիքը մինչեւ վերջ, մինչեւ բարձրակետին հասցնող, բայց առանց պարտադրանքի, առանց արտաքին հույզերի ճնշման. ծառերը մերկ են՝ տերեւագուրկ,



Շարունակությունը՝ էջ 8

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 5

Այս բարդ համադրությունների աշխարհը գեղարվեստական իրականություն է դառնում շատ պարզ միջոցներով: Դա գալիս է ժողովրդական խոսքի եւ բանահյուսական միջոցների օգտագործումից, որոնց Սահյանը միշտ էլ հավատարիմ է մնացել: Ե՛վ ժողովրդական մտածողությունը, ե՛ւ բանահյուսությունը ճշգրտորեն արտացոլում են բնաշխարհի գեղագիտությունը: Դա արտահայտվում է ե՛ւ խոսքի տաղաչափական ու կշռության կառուցվածքի, ե՛ւ հանգաբանության, ե՛ւ պատկերի հյուսվածքի, ե՛ւ բանաստեղծների երգային շարակարգության մեջ: Հատկապես առատ են ժողովրդական խոսքի տարրերը, որոնք բերում են յուրահատուկ իմաստային հնչերանգ եւ ներքուստ կառուցում թե՛ առանձին պատկեր-արտահայտությունը, թե՛ ամբողջական պատկեր-բանաստեղծությունը: Սահյանն օգտագործում է նաեւ թվերի, սովորյալների, հավատալիքների ժո-

ղովրդական ձեւերը: Ժողովրդական խոսքը եւ բանահյուսությունը Սահյանի պոեզիայում արդյունք են բնաշխարհի եւ բնության ու մարդու այն զգացողության, որը տվյալ նյութը տվյալ նյութի լեզվով բացելու օրենքն է:

Բնաշխարհի խոր ու մանրակրկիտ զգացողությամբ Հ. Սահյանը հայ պոեզիայում ստեղծեց բուն բնաշխարհիկ իր քնարերգությունը: Բնությունը եւ մարդուն պատկերելով անընդհատ շարժման, փոփոխությունների ու պատճառակցական կապերի մեջ՝ նա հայտնաբերեց բնաշխարհի հավերժությունը իր օրենքները:

Բնության եւ անձնական քնարերգության նուրբ համադրություններով են առանձնանում **Գեղամ Սարյանի** բանաստեղծությունները, որոնք ի մի բերվեցին «Զրիգանթեմ» գրքում (1968) եւ «Երկեր»-ի հիմնահատորյա ժողովածուի առաջին հատորում (1969): Դրանցում հնչում են ուշ աշնան, ձմեռամուտի, մայրամուտի խո-

հեր, որոնք բերում են հրաժեշտի տրամադրություններ: Հրաժեշտի ապրումներին համապատասխան հայտնաբերվում է բնութագրական խորհրդանշանը՝ ուշ աշնան վերջին ծաղիկը՝ քրիզանթեմը: Ուշ աշնան ցրտաշունչ օրերի մեջ, փողոցի մայրթերի վրա, անցորդների հայացքի ներքո իրար են նայում ճերմակ քրիզանթեմն ու ծերունագարդ բանաստեղծը.

*Քրիզանթեմ, ճերմակ քրիզանթեմ, վերջին ծաղիկ, աշնան վերջին հառաչ, ես քեզ էլ ի՞նչ սրտով բարի մաղթեմ, իմ տխրություն՝ կանգնած աչքիս առաջ: Դու բացվեցիր ձմռան նախադրան, էլ քեզ ինչպե՞ս ասեմ՝ գալըդ բարի, ես քեզ նման ճերմակ, դու ինձ նման. Շուտով կըծածկի մեզ ձյունն աշխարհի:*

Հոգու ցավը բնության մեջ է հայտնաբերում իր զուգորդվող վիճակը: Գ. Սարյանի բնապատկերները հագեցած են

խոր ու նուրբ ապրումներով. բնապատկերը (աշուն, աշնան վերջին ծաղիկ) դառնում է վիճակ, վիճակը մարդկայնացվելով՝ վերածվում է հոգեվիճակի եւ արտացոլում մարդու որոշակի գոյակիճակը: Այս տեսանկյունից անթերի է «Մայրամուտի ժամանակ» բանաստեղծությունը, որի մեջ օրվա մայրամուտը եւ հոգու մայրամուտը դառնում են անխուսափելի հեռացումի մի տխուր-լուսավոր, արցունքոտ խոնարհ, տառապագին-անդառնալի ապրում: Նույն այս տրամադրություններով են հյուսված նաեւ «Հեռանալուց առաջ», «Իրիկնային», «Ես աշխարհից կզնամ» եւ շատ այլ բանաստեղծություններ: Իրավացի էր Հ. Սահյանը, որը, գրախոսելով «Զրիգանթեմ» ժողովածուն, գրում էր. «Շնչառության պես բնական են բանաստեղծի տողերը եւ արցունքի պես պարզ» («Գրական թերթ», 1968, թիվ 207): Գ. Սարյանի այս սեղմ քնարական էջերը եկան լրացնելու ժամանակի մարդու հոգեկան կերպարը եւ նրան լուռ շնչալու. «Ազնիվ արցունքից ազնիվ բան չկա»:

Շարունակելի

**Դավիթ ԳԱՍՊՐԱՅԱՆ**  
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր





Սկիզբը՝ էջ 7

Հաճախ թվում է, թե նա երկար, շատ երկար է ուսումնասիրել, քննել, վերլուծել այն ամենը, ինչը շրջապատում է իրեն, այլ կերպ ասած՝ ջանացել է «յուրացնել» դրանց ներքին ու արտաքին հայտերը, սակայն երբ փորձում ես համադրել, ասել, քննարկել նրան ու սածիլն իր ամենի մեջ տաքացնող մարդու «աշխարհները», հասկանում ես, որ գաղտնիքը ոչ թե լավ դիտարկման, այլ նկարչի վերլուծական քանքարի մեջ է, հենց իր՝ նկարչի ինքնատիպ, ինչ-որ տեղ անսովոր աշխարհում:

«Երիտասարդները թող չմոռանան այն կապերը, որոնք մեզ առնչում են մեր հնօրյա արվեստին: Այդ կապերը, եթե սերտ լինեն, կարելի կլինի ստեղծել հայկական բարձր արվեստ: Դրանով Հայաստանը կմեծանա այնքան, որով կչափվի աշխարհի խոշորագույն արժեքների հետ: Արվեստը համաշխարհային կոառնա միայն ազգային տարերքով... Հակոբյանի արվեստը

# ԱՄԵՆԱԼՈՒԱԿՅԱՑ ՈՒ ԽՈՍՈՒՆ ՆԿԱՐԻՉԸ

նման մակարդակի հրաշալի օրինակ է»,- այս խոսքերի հեղինակը աշխարհահռչակ Գառզուն է, նա, ով ամենից լավ էր հասկանում այն ոգին, այն երազների ու ձգտումների մոլիչ ուժը, որ Սփյուռքում ծնված ու ապրած մարդուն պահում էր հայ, պահում իր արմատներին ու «սաղարթներին» հավատարմորեն ներդաշնակ:

Մարդու եւ բնության, մարդու եւ հենց մարդու ձեռքով ստեղծված իրերի ու առարկաների «ես»-ը ձեւավորող ներքին ու արտաքին հայտերն ամբողջության մեջ տեսնելու, դրանք կտավի վրա սուղ միջոցներով, բայց բարձր արտահայտչականությամբ բացահայտելու կարողությունը շնորհ է՝ տրված ի վե-



րուստ: Այդ շնորհը նախ եւ առաջ իր «գործը», իր կոչումը արժեւորելու արվեստն է, սիրելու եւ փայփայելու, սիրելու եւ ապրեցնելու արվեստը: Սիրել, եթե նույնիսկ «սիրեցյալը» գորշության մեջ է, «անշուք» է ու թվացյալ անհրապույր: Սիրել՝ որպես հոգու պարտք, սիրել, որովհետեւ չես կարող չսիրել: Հակոբյանը սիրում էր այն ամենը, ինչն այսօր կա, բայց կարող է չլինել, ինչը նա կարեւորում էր ընտրում էր, ինչը վերարտադրում էր կտավի վրա, եւ այդ ամենը՝ անշահախնդրորեն, առանց երկմտելու, առանց նժարին դնելու: Այս շնորհն առավել քան արտահայտված է նկարչի մարդկային տարբեր հոգեվիճակներ պատկերող կոմպոզիցիաներում («Վիշտ», «Մարդը եւ բնությունը», «Դերձակը», «Կինը խոհանոցում» եւ այլն): Նրա անանուն ու անվանի հերոսները խոսում են արժանապատվորեն՝ թող որ ցավի ու տառապանքի միջից, հույզ ու ապրումի, կորուստների ու գտածի, կյանքի երկար թվացող ճանապարհին կամ մահվան մոտալուտ նիքի մեջ: Նկարիչը լուռ լսում է նրանց, լսում ու ապրում նրանց հետ: Նկարչի պատկերասրահում առանձնակի տեղ ունեն նատյուրմորտները: Փորձենք հիշել դրանք: Հնաոճ, սոխ ու սխտորով ծանրաբեռնված աթոռ, քցաններն ու ապխտած ձկները, անշուք, «աղքատ» խոհանոցի անկյունն ու նավթավառը՝ սուրճի պարագաներով, պատշգամբի մի հատվածը՝ ծխատարի խողովակից կախված զամբյուղով ու սխտորի կա-

պով, մանեկենն ու նկարակալը՝ կանչող-պահանջող ձեռնոցներով եւ այլն: Դժվար է անտարբել դիտել եւ զմայլվել լոկ նկարչի՝ դրանք կտավի վրա վերարտադրելու վարպետությամբ: Այդ վարպետության, ձեւ ու ծավալի, լույս ու ստվերի զարմանալի լուծումների տակ թաքնված մի գրույց կա, որն ստիպում է քեզ ականջալուր լինել, լսել, թե ինչպես եւ ինչի մասին է խոսում նկարիչն այս իրերի ու առարկաների հետ՝ մի տեսակ անձնավորելով դրանք: Ու երբ դու միանում ես նրանց՝ նկարչի եւ իր աշխարհի իրերին ու ոգեղեն «հերոսների» գրույցին, դառնում ես դրանց մի մասն ու սովորում ճանաչել, ճանաչել աշխարհն իր խորքայնության ու բազմաշերտության մեջ եւ սիրել, սիրել՝



քեզ վերապահված ակնթարթի, ժամանակի ու հարատևության մեջ: Եվ այս մտածողությունն էր, որ նկարչին դարձնում էր աշխարհի մարդը՝ սիրելի ու հասկանալի նաեւ օտար ժողովուրդներին: 1979 թ. Մոսկվայում բացված Հակոբ Հակոբյանի ցուցահանդեսի տպավորությունների գրքում Օ. Շչեդրինը խոստովանում է. «Յուրաքանչյուր հանդիպում Հակոբի՝ այսքան խելոք ու նրբակերտ արվեստի հետ տոն է: Այդ տոնին սպասում, երկար պատրաստվում ես, հետո երկար մտորում: Սա կյանքն է: Թող շատ լինեն նման խելոք հանդիպումները, որոնք այնքան անհրաժեշտ են մարդկանց»:

Այսպիսի զգացումներով էին տոգորվում բոլոր նրանք, ովքեր առնչվում էին մարդ ու արվեստագետ Հակոբ Հակոբյանի հետ, ով հավերժություն մեկնելուց առաջ վստահաբար հաշտ էր իր ու իր Աստծո հետ, քանզի իր հոգու ու մտքի լուսավոր բոլոր գանձերն առատորեն ժառանգել էր իր ժողովրդին, ժառանգել մարդկանց ու ժամանակներին:

Աստղիկ ՍՍՍՏՐՈՆԵՅԱՆ

## ՕՐՎԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Սկիզբը՝ էջ 6

Ծաղկագարդի օրը հայոց եկեղեցիները զարդարվում են ուռնեւո ճյուղերով, առավոտյան կատարվում են հանդիսավոր ժամերգություն եւ Անդաստանի կարգ, որից հետո օրհնված ճյուղերը բաժանվում են հավատացյալ ժողովրդին:

Ծաղկագարդը յուրաքանչյուրիս հիշեցնում է Զրիստոսի գալստյան մասին՝ խրատելով ապրել այնպես, որ կարողանանք ուրախությամբ ընդառաջ դուրս գալ Տիրոջը՝ Նրա առջեւ փռելով մեր հոգու ընծաները եւ արժանի լինենք Միածնի առջեւ կանգնելու:

Ծաղկագարդի օրը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գառեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ հռչակված է որպես Մանուկների օրհնության օր:

### Ավագ երկուսքի

Նվիրված է աշխարհի արարչագործությանը: Օրվա ավետարանական ընթերցումներում հիշատակվում են Երուսաղեմի Տաճարի մաքրագործումը եւ անպատու թգնու պատմությունը, երբ Հիսուսը, Բեթանիայից Երուսաղեմ վերադարձին, անեծքով չորացնում է անպատու թգնին՝ վկայելով. «Եվ ամեն ինչ, որ ուզեք աղոթքի մեջ հավատով, կատարեք» (Մատթ. ԻԱ 18-22): Թգնու պատուը խորհրդանշում է մարդկային բարի գործերն ու առաքինությունները, որոնցից զուրկ մարդը պատժվելու է անպատու թգնու նման:

Օրվա խորհրդով նախ պետք է ի խնդիր հավատի մաքրության սովորենք պատշաճ վերաբերմունք դրսևորել սրբությունների հանդեպ եւ բարի գործերով մշտապես վկայենք մեր հավատը, փաստենք

մահվան հանդեպ Զրիստոսի Հարության հաղթությունը:

### Ավագ երեքսքի

Այս օրը հիշատակվում է տասը կույսերի առակը (Մատթ. ԻԵ 1-13): Առակը հինգ իմաստուն եւ հինգ հիմար կույսերի պատմությամբ պատգամում է մշտապես պատրաստ լինել Տիրոջ գալստյանը: «Արթո՛ւն կացեք, որովհետեւ չգիտեք ո՛չ օրը եւ ո՛չ էլ՝ ժամը»:

Երեկոյան ժամերգության ընթացքում եկեղեցու ատյան են դուրս գալիս տասը մանուկներ: Նրանցից հինգը ձեռքներին պահում են վառվող մոմեր եւ խորհրդանշում են իմաստուն կույսերին, իսկ մյուս հինգը՝ հանգած մոմերով, խորհրդանշում են հիմար կույսերին: Այս արարողությունը մեզ պատգամում է առաքինի գործերով պատրաստ լինել Տիրոջ գալստյանը:

### Ավագ չորեքսքի

Այս օրը եկեղեցին հիշատակում է Բեթանիայում կնոջ կողմից Հիսուս Զրիստոսի օծումը եւ Տիրոջ մատնությունը:

Ավագ չորեքսքի օրվա ավետարանական ընթերցումը հորդորում է չնայած անհաշիվ Աստծու սերն ու վստահությունը եւ հիշել մարդկության համար Նրա կրած չարչարանքներն ու մահը, չէղվել ճշմարիտ ճանապարհից, երկրպագել ու փառավորել Աստծուն:

### Ավագ հինգսքի

Օրը նվիրված է Տիրոջ Վերջին ընթրիքին: Եկեղեցիներում մատուցվում է Սբ Պատարագ՝ ի հիշատակ Վերջին ընթրիքի ժամանակ Սբ Հաղորդության խորհրդի հաստատման:

Երեկոյան կատարվում է Ռոնկվայի արարողություն: Ինչպես Զրիստոսը Վերջին ընթրիքին, ճշմարիտ հեգույան ու խոնարհության օրինակ ցուցաբերելով, լվանում է իր աշակերտների ոտքերը, այնպես էլ հայոց եկեղեցիներում հոգեւորականները եկեղեցու խորանին ծնկաչոք լվանում եւ յուրով օծում են 12 մանուկներին ոտքերը:

Ավագ հինգսքի առավոտյան կատարվում է Ապաշխարողաց կարգը, որին մասնակից հավատացյալները Մեծ պահքի պահեցողությունից հետո արձակվում են իրենց մեղքերից: Ապաշխարությունը Հայ եկեղեցու յոթ խորհուրդներից է:

### Ավագ ուրբաթ

Ավագ ուրբաթը Հիսուս Զրիստոսի չարչարանների, խաչելության, մահվան ու թաղման հիշատակության օրն է: Օրը սկսվում է Խավարման կարգի խորհրդավոր արարողությամբ, որը, փաստորեն, կատարվում է Ավագ հինգսքի երեկոյան:

Եկեղեցիների խորանին դրվում են Զրիստոսին եւ Նրա աշակերտներին խորհրդանշող 13 մոմեր եւ Ավետարաններից ընթերցվում յոթ հատվածներ՝ Զրիստոսի մատնության, դատապարտության, աշակերտների փախուստի, Պետրոսի ուրացման մասին: Ամեն ընթերցումից հետո հանգցվում են 12 աշակերտների մոմերից երկուսը, եւ վերջում մնում է միայն Զրիստոսին խորհրդանշող մոմը. Տերը միայնակ էր մնացել: Հետեւում է Ավագ շաբաթվա ամենախորհրդավոր պահը, երբ մարդու եւ եկեղեցու բոլոր լույսերը, եւ խավարի ու լուռության մեջ հնչում է զոջման ու ապաշխարության «Տէ՛ր, ողորմեա՛»-ն եւ «Ո՛ւր ես, մա՛յր իմ» մեղեդին:

Ավագ ուրբաթ տեղի է ունենում նաեւ Խաչելության կարգը, իսկ երեկոյան ժամերգությունից հետո՝ Նախատանակի արարողության ընթացքում, կատարվում է Թաղման կարգը, երբ Հիսուս Զրիստոսի

խորհրդանշական գերեզմանը՝ պատրաստված ծաղիկներից եւ ճյուղերից, պատեցվում է եկեղեցու շուրջ՝ ի տես հավատավոր ժողովրդի:

### Ավագ շաբաթ

Ավագ շաբաթը հիշատակում է Հիսուսի կողմից դժոխքի ավերումը եւ արդար հոգիների ազատումը: Ինչպես ուսուցանում է մեզ եկեղեցու վարդապետությունը, Զրիստոսը, գերեզման դրվելով, իջնում է դժոխք եւ ավերում այն՝ փրկություն շնորհելով արդարների հոգիներին: Այս օրը սգո եւ տրտմության օր է:

Երեկոյան մատուցվում է Ծրագալույցի Սբ Պատարագ, որի ավարտին ազդարարվում է Փրկչի Հրաշափառ Հարության ավետիսը, որով եւ ամբողջանում եւ իմաստավորվում է Մեծ պահքը:

«ԵՐԻՍՏՈՆ ՅԱՐԵՒԷ Ի ՄԵՌԵԼՈՅ, ՕՐՀՆԵԱԼ Ե ՅԱՐԻԹԵՐԻՆՆ ԵՐԻՍՏՈՆ»:

## ԵՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր.

18.3.2013 թ.

Տպագրանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ